№ 271 ՀԻՆԳՇԱԲԹԻ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1913

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 271

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ
43-ՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պէտք վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան ՁՐԻԱԲԱՐ հետևեալ գրքերից ՄԷԿՆ ՈՒ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Գիրքը բաղկացած է 408 էջից։

2) Վրթնի (Ա. Քաջատարի) Մանրանկարները, I և II հատոր։

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։ Գիրքը բաղկացած է 520+472 էջից։

Մինչև ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ը բաժանորդագրվածները կը ստանան ԵՐԿՐՈՐԴ գիրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները—ԱՌԱՋԻՆ գիրքը։

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ճանապարհածախսը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ“ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Ս. Գ. ԽՈՒԽՈՒԵԱՆՑԻ
Գրասենեակային պատկանելիքների և արդուզարդային առարկաների
ՀՆԱԳՈՅՆ ԽԱՆՈՒԹԸ,
որ գտնվում էր Երևանեան հրապարակի վրա, Թամամշեվի շինութեան մէջ,
ՓՈԽԱԴՐՎԵԼ Է
իր սեփական տունը, Միխայլովսկի պր. և Սեմենովսկայա փող. անկիւն, № 31/6.
առ. 1122. 2—2

Հայ Գրողների Կովկ. Ընկ. Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան անդամների և յարգելի հայ հասարակութեան, որ ԱՅՍՕՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԵՐԵԿ. Ժ. 8-ին նշանակված է Ընկերութեան

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ (նոր շրջանի) **ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵԿՈՅԹԸ։**

Կը բանախօսեն՝
1) Յովհ. Թումանեան—«ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԿԵԱՆՔԻՑ»։
2) Առաքել Բաբախանեան (Լէօ)—«ՆՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԽԱՉ. ԱԲՈՎԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ».
3) Մինաս Բերբերեան—«ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ, ՌԱՖՖԻԻ և ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԿԵԱՆՔԻՑ»։

Դահլիճը բաց է ժամը 7½-ից։
առ. 1126. 1—1

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎ. ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

խնդրում է այն թերթերի խմբագրութիւններին, որոնց մօտ ժողոված կան գումարներ յօգուտ Գրական Ֆոնդի, Սայաթ-Նովայի մահարձանի եւ Ա. Արասխանեանի ֆոնդի—հասցնել վարչութեանս։
առ. 1129. 1—1

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ
Այսօր, հինգշաբթի, դեկտ. 5-ին, տեղի կունենայ հետաքրքրական ներկայացում բաղկացած 3 բաժանմունքից, մասնակցութեամբ խմբի առաջնակարգ արտիստների։ Այսօր կըմբշամարտեն — Չէմբէր-Ցիպպը՝ Ջակսոնի հետ, Վախտուրովը՝ Լավրէնովի հետ, Սէպնիկը Ժան-Պաբրաիէի հետ, Կօպիէվը՝ Սօլովիէվի հետ։ Մանրամասնութիւնները աֆիշաներում.



Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամէն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՉՐԻ: Бебутовская 23. тел. 7—92.
(ա.օ.) առ. 977. 100—29

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւն՝
Ամէն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արաս-Արադսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 679. 74—35

ԲԺԻՇԿ
Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ։
(Առանձն. կրծքի, թոքախտի և արեան պակասութեան)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամէն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը
Իրաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)
(ե.հ.կ.) առ. 774. 100—35

ՓՈՐՁԵՑԷՔ ԾԽԵԼ
ՆՈՐ
ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
ՉԱՅԿԱ
„ԸՆԿ. ԿՕՄԷՏԱ“
ԹԻՖԼԻՍ
20 հատը 6 կ., 10 հատը 3 կ.
(հ.կ.) առ. 1094. 10—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 5-ին Հայոց Դրամատիկ. Ընկ. խումբը կը ներկայացնէ
ԴՕՆ-ԺՈՒԱՆ
Կոմէդիա 5 գործ. Մօլիէրի, Թարգմ. Գ. Իփէկեանի։
Մասնակցում են.—տ. տ. Արուսեակ, Յասմիկ, Գուլազեան, պ. պ. Ալլահվերդեան, Բերոյեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Մուրադեան, Փափազեան Վահրամ, Թառլանեան, Տէր-Առաքելեան, Օվի-Ահարոնեան, և ուրիշ.։
Սկիզբը երեկ. ժամը 8-ին։
Ռէժիսոր՝ Ա. Արմէնեան
Տոմսակները 1 ր. մինչև 30 կոպ.։
Հիւրերը, ըստ յանձնարարութեան, մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։
առ. 1124. 1—1

ԿՆՍԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տէլէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամէն օր՝ ժ. 11—12 առ., մանկական հիւանդութիւն ունեցողներին երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ցեր. ժամը 3—4-ը։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Ջակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկի
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ն. Զ. Ռամիկեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ.կ.) առ. 868. 100—8

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻՒՐՔԵՐԸ, ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Թիւրքահայաստանում րէֆօրմներ մտցնելու հարցը, որը, թւում էր, արդէն մօտեցել էր իր լուծման, նորից խճճվում է։ Մեծ պետութիւնների դիպլօմատիան կանգնած է, ինչպէս և մի քանի ամիս առաջ, «երիտասարդ-թիւրքական» կառավարութեան յամառ ընդդիմադրութեան առաջ և չը գիտէ, ըստ երևոյթին, ինչպէս յաղթել այդ դիմադրութեան։

Հեռացված են այն խոչընդոտները, որոնք ամենից էականն էին համարվում։ Այն մեծ պետութիւնները, որոնք շահագրգռված էին, որպէսզի Անատօլիան մտնի խաղաղ զարգացման շաւղի մէջ, եկել են համաձայնութեան։ Տարաձայնութիւնները Ռուսաստանի և Գերմանիայի միջև, որոնք ամենից շատ խափանում էին ընդհանուր տեսակէտի մշակման, հարթված են։ Բ. Դռան մի ընդհանուր ծրագիր է առաջադրված։ Եւ սակայն հարցը առաջ չէ գնում։

Երիտասարդ-թիւրքական կառավարութիւնը յայտնել է, որ նա բանակցութիւններ է վարում Դաշնակցութիւն կուսակցութեան ներկայացուցիչների հետ և որ նա յոյս ունի ձեռք բերել այդպիսի բանակցութիւնների միջոցով րէֆօրմների հարցի այնպիսի լուծումն, որով հայերը միանգամայն գոհացած կը լինեն։ Այս փաստի ցուցմունքը ճիշդ է։ Նոյեմբերի 22-ին ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը, երիտասարդ-թիւրքական կաբինէտի հոգին, հրաւիրել է իր մօտ Դաշնակցութիւն կուսակցութեան ականաւոր գործիչներին և առաջարկել է նրանց ներկայացնել կառավարութեանը՝ ցուցակը այն հարցերի, որ կուսակցութիւնը կը ցանկար լուծված տեսնել։ Միաժամանակ կարգադրութիւն է արված հիմնել առանձին կօմիտէտ Վանում, որին յանձնված է քննել և լուծել վէճերը հողերի մասին՝ այս հողերի հայ-սեփականատէրերի և այն քիւրդերի միջև, որոնք յափշտակել են այդ հողերը։ Հաշտարարութեամբ համաձայնութիւն ձեռք բերելու անհնարաւորութեան դէպքում, կօմիտէտին լիազօրութիւն է տրված վարձատրել հայերին դրամով։ Կօմիտէտը բաղկացած է հինգ անդամներից. երկու հայ, երկու թիւրք և մի յոյն։ Կ. Պօլսում բանակցութիւնները պտտում էին, գլխաւորապէս, հայերի ներկայացուցիչների թիւը պարլամենտում աւելացնելու հարցի շուրջը։

Երիտասարդ-թիւրքական կառավարութեան այդ ընթացքի նպատակը շատ պարզ է։ Որչափ ժամանակ որ րէֆօրմների ծրագրի հարցը յարուցանում էր տարաձայնութիւններ մեծ պետութիւնների միջև, Թալէաթի հոգսը չէր ամենևին, թէ ինչ են կամենում դաշնակցականները։ Հայերի գանգատները քիւրդական յափշտակութիւնների մասին մնում էին անուշադիր և հայկական վիլայէթներում թագաւորում էր այնպիսի կամայականութիւն, որ շատ քիչ էր տարբերվում համիդականից։ Համիդի ժամանակ հայերին կողոպտում և սպանում էին «կեցցէ սուլթանը» աղաղակներով. այժմ նոյնն է կատարվում «կեցցէ սահմանադրութիւնը» աղաղակներով։ Թալէաթը քաջ ծանօթ էր այդ ամենին, բայց նրա մտքովը բնաւ չէր անցնում դիմել դաշնակցականներին։ Ընդհակառակը, երբ սրանք դիմում էին իրան, նրան անհնարին էր գտնել։

Սակայն հէնց որ մեծ պետութիւնները համաձայնութեան եկան և մշակեցին պահանջների ընդհանուր ծրագիր, իսկոյն ներքին գործերի մինիստրութիւնը համակվեց արտակարգ հետաքրքրութեամբ դէպի հայերը։

Ոչ մի կասկած չը կայ, որ Բ. Դուռը կը յօժարի այժմ խոստանալ հայերին շատ բան, և գուցէ, ինչպէս այդ պահանջում են դաշնակցականները, կը հրատարակվի նոյնիսկ յատուկ սուլթանական իրադէ, հաստատող խոստումն։ Կառավարութեան համար կարևոր է ներկայումս մի բան, որպէսզի հայկական հարցը լուծվի տնային միջոցներով, առանց Եւրոպայի։

Եւ նրա այդօրինակ լուծման համար համաձայնութիւն տալը ամենամեծ սխալը կը լինէր դաշնակցականների կողմից։ Այդ կուսակցութիւնը հանդիսանում է Թիւրքիայում մի այնպիսի կազմակերպութիւն, որ կոչված է խօսել հայ ժողովրդի անունով և շատ անգամ նա տուել է ապացոյցներ այն մասին, որ նա կարող է պաշտպանել ազգային շահերը։ Այժմ Թալէաթը և նրա արբանեակները գործ կը դնեն բոլոր ջանքերը, բոլոր կաշառումները, բոլոր սպառնալիքները, որպէսզի խլեն այդ կուսակցութիւնից համաձայնութիւն։ Չը պէտք է տրվի այդ համաձայնութիւնը։

Հայկական հարցը կարող է լուծվել փոքր ի շատէ գոհացուցիչ կերպով միայն մի պայմանով. եթէ երիտասարդ-թիւրքական կաբինէտի խոստումները ամրացվեն մեծ պետութիւնների հաւաքական երաշխիքով և եթէ րէֆօրմների իրագործումը Հայաստանում դրվի մեծ պետութիւնների հաւաքական կօնտրոլի ներքոյ։

Մեծ պետութիւնների նօտան այդ է պահանջում։ Թիւրքաց կառավարութիւնը կամենում է խոյս տալ դրանից և սկսում է սեպարատ (անջատողական) բանակցութիւններ հայերի հետ։

Բարեբաղդաբար, ոչ ոք դեռ չէ մոռացել, թէ որքան այդպիսի խոստումներ տրվեցին ոչ միայն հին րէժիմի, այլև սահմանադրական րէժիմի ժամանակ։ Այն, որին դիմում է այժմ Թալէաթը, հին խորամանկութիւն է։ Մի Մաքիավէլ խորհուրդ էր տալիս իր «տիրոջ» խոշոր դժուարութիւնների րօպէներին՝ խոստանալ ամեն բան. նա հաւատացնում էր նրան, որ երբ հանգամանքները դէպի լաւը փոխվեն, նա միշտ հնարաւորութիւն կունենայ չը կատարել իր խոստումներից ոչ մինը։

Վանի կօմիտէտը կատարեալ կօմեդիա է։ Մենք նոյն իսկ կարծում ենք, որ նա կաշխատէ։ Ի հարկէ, համաձայնութիւն հայերի և քիւրդերի միջև չի կայանայ։ Ի հարկէ, պէտք կը լինի հայերին դրամական հատուցում տալ։ Ենթադրենք ամենալաւը, թէ հողերի գնահատութիւնը արդարացի կը լինի։ Մի՞թէ յոյս կարելի է ունենալ, որ հայերը կը ստանան դրամը։ Պէտք է շատ լաւ ծանօթ լինել Թիւրքիայի վարչական կազմի և նրա ֆինանսների դրութեան հետ՝ այդ հարցին պատասխանելու համար։

Իսկ րէֆօրմնե՞րը։ Մի անգամ որ նրանք չը դրվեն մեծ պետութիւնների կօնտրոլի տակ, նրանք կենթարկվեն նոյն վիճակին, ինչպէս և 90-ական տարիների «րէֆօրմները»։ Մակեդոնիայում նոյնիսկ մի փոքր կօնտրոլ կար և սակայն ոչինչ դուրս չեկաւ։ Միակ բանը, որ կարող են ձեռք բերել դաշնակցականները, դա կը լինի հայ-պատգամաւորների քանակութիւնը աւելացնելը պարլամենտում։ Թալէաթը համաձայնում է արդէն հասցնել այդ թիւը 10-ից մինչև 18։ Հայերը պահանջում են 22։ Ենթադրենք, որ Թալէաթը կը զիջէ։ Ի՞նչ իրական արժէք կունենայ այդ զիջումը, երբ ինքը թիւրքական պարլամենտը ամբողջովին ոչ մի քաղաքական ազդեցութիւն չունի։

Մեծ պետութիւնների պահանջները առաջադրված են և հայկական հարցը լաւ ճանապարհի վրա է։ Եւ հայերի համար, մասնաւորապէս դաշնակցականների համար, և մեծ պետութիւնների համար այդ դրութիւնից բոլորովին որոշ պահանջներ են բղխում։ Թալէաթի շոյանքներին հայերը պէտք է պատասխանեն շատ յարգալից կերպով, եթէ այդ պէտք է, բայց և շատ ամուր կերպով արտայայտված ցանկութեամբ — կատարել մեծ պետութիւնների ներկայացրած ծրագիրը։ Մեծ պետութիւնների երաշխիքը աւելի լաւ է, քան Մօհամմէդ սուլթանի տասն իրադէները, որ նոյնքան անզօր է, ինչքան և թիւրքական պարլամենտը։ Ինչ վերաբերում է մեծ պետութիւններին, նրանք պէտք է պնդեն իրանց պահանջների կատարման վրա։ Նրանց չէ վերաբերում կառավարութեան բանակցութիւնները հայերի հետ, որոնք վարվում են այնպիսի պայմանների մէջ, որոնց մէջ խօսք լինել չէ կարող «do, ut des» պրինցիպի ազատ գործադրութեան մասին։ Թալէաթը ուժեղ է, հայերը տկար։ Եւրոպան չը պէտք է թոյլ տայ նոր քաղաքական կօմեդիայի ցուցադրութիւնը։

Ռուսական դիպլօմատիայի պարտքն է, եթէ գերմանացիները տատանվեն, հրապարակված Սանդերսի միջադէպի էֆֆէկտաւոր փինալով, պնդել այն մասին, որ Բ. Դուռը ընդունի մեծ պետութիւնների ծրագիրը։ Եթէ Բ. Դուռը նորից յամառի, մեծ պետութիւնների ձեռքին միջոց կայ ստիպել նրան խոնարհել։ Այդ միջոցները ցոյց են տրված Պարիզի կոնֆերէնցիայի նոյեմբերի 18-ի որոշման մէջ—թոյլ չը տալ Թիւրքական փոխառութեան կնքումը եւրոպական որևէ բօրսաներում և չը համաձայնել մաքսային տուրքերի բարձրացման Թիւրքիայում։ Թալէաթը ճարպիկ քաղաքագէտ է, բայց առանց փոխառութեան և առանց մաքսային տուրքերի աւելացման Թիւրքիան այժմ չէ կարող եօլա գնալ։

Երիտասարդ Թիւրքերը սխալված կը լինեն ընդունել մեծ պետութիւնների կոնտրօլը։ Դաշնակցականները ոչ մի կարիք չունեն առանձին բանակցութիւններով Թալէաթի հետ՝ դժուարացնել մեծ պետութիւնների միասին։

Ս. Զիլէլեկեան

(«Рус. Вѣдомости» № 276)

Տպելով այս յօդուածը, որ գալիս է ապացուցանելու մեր գրածը անցեալ անգամ դաշնակցականների խաղացած վատ դերի մասին հայոց հարցի մէջ, մենք կը խօսենք այդ մասին վաղը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Պետերբուրգ, 27 նոյեմբերի

Ռուս առաջադիմական գործիչների մի կարևոր խումբ, երէկ, նոյեմբ. 26-ին, մի մասնաւոր ժողով կայացրեց յատկապէս հայկական հարցի մասին։ Այդ խումբը փափագ էր յայտնել, որ հայերի կողմից ներկայացուցիչներ գան և հայկական հարցի առիթով թէ նոր տեղեկութիւններ տան և թէ գլխաւորաբար պարզեն իրանց հայեցակէտն և բաղձանքները։ Հայկական ակումբի մէջ կայացած մի խորհրդակցութիւն որոշել էր այս առիթով, թէ որոնց մասնակցութիւնը ցանկալի է, և այս անձերն էլ գնացել էին ռուսական ժողովին։

Ժողովը տեղի ունեցաւ յայտնի ազատական քաղաքական գործիչ Ա. Բրեանչանինովի տանը, ուր ներկայ էին բազմաթիւ ռուս նշանաւոր անձնաւորութիւններ. Պետական Խորհրդի և Պետական Դումայի անդամներ, նշանաւոր պրոֆեսօրներ, հասարակական գործիչներ, խմբագիրներ, գեներալներ, այլ զինուորականներ և այլն։ Ժողովի նախագահ ընտրվեց պրոֆեսոր Մ. Պ. Զուբինսկի։ Ա. Բրեանչանինով մի ընդարձակ զեկուցում արաւ Ռուսաստանի՝ Մերձաւոր Արևելքի վերաբերեալ արտաքին քաղաքականութեան մասին, երևան հանելով և դատապարտելով նրա անհետևողականութիւնն և մանաւանդ թոյլ և երկչոտ վերաբերմունքը, շարունակ ետ ու ետ ընկրկումը, Գերմանիայից վախենալով նրան զիջումներ անելն, և պահանջեց, որ Ռուսաստանը վերջապէս զգայ այս անյարիր քաղաքականութեան վնասակարութիւնն և վարվի կտրուկ և ուժգին, ինչպէս վայել է Ռուսաստանի նման մի մեծ և հզօր պետութեան։ Ճառախօսը մանրամասն կանգ առաւ ռուսական շոգենաւի վրա բռնված և ապա ծածկաբար դատված և սպանված Կավաքլը Մուստաֆայի դէպքի վրա և խօսելով հայկական բարենորոգումների ծրագրի մասին՝ քննադատեց նրա չափազանց կրճատումները, Գերմանիայի ընդդիմութեան և Թիւրքիայի առած համարձակութեան շնորհիւ։ Ա. Բրեանչանինով լաւ հմուտ էր իր ճառած նիւթին։ Այնուհետև նախագահը յիշեցրեց, որ հայկական հարցը նախորդ ժողովում ևս արծարծված լինելով՝ ռուսական ազդու միջամտութիւնն անհրաժեշտ էր գտնված, բայց թէ խորհրդակցութիւնը նախ քան իր եզրակացութիւնը կայացնելը հարկաւոր էր համարել լսել հայ ժողովրդի ձայնը և այդ պատճառով էլ հրաւիրել էր այսօր հայերին, ուստի խնդրեց, որ ներկայ գտնվող հայ ներկայացուցիչները բացատրեն հայկական հայեցակէտն այս խնդրի մասին։ Հայերից խօսեցին հետևեալները։ Ն. Ադոնց ընդարձակ պատմական տեսութիւնով սկսած Իսրայէլ Օրիից, պարզեց Ռուսաստանի և հայոց յարաբերութիւնները, Եւրոպայի և Ռուսաստանի միջամտութիւնները յօգուտ Թիւրքահայոց, հայկական բարենորոգումների հարցի շրջանները, Գերմանիայի միջամտութեան պատճառով ծրագրի կրած աննպաստ փոփոխութիւններն և այժմեան դրութիւնը։ Ց. Սաղաթէլեան յարձակվեց Լօբանով-Րօստովսկիի սխալ քաղաքականութեան վրա, բացատրեց թէ առհասարակ ռուսական կառավարութիւնը բաւականաչափ ծանօթ չէ եղել Հայաստանի և հայկական իրականութեան հետ, որի պատճառով էլ առաջացել են սխալ կարծիքներ և սխալ քաղաքականութիւն հայերի մասին, որոնք Արևելքում հաւատարիմ դաշնակիցներն են ռուսաց, իսկ ներքին քաղաքականութեան մէջ էլ կուսակից ընդհանուր ռուսական վերանորոգութեան։ Երբ Սաղաթէլեան յարձակվում էր ռուսական մինիստրների անմտութեան վրա, ռուս առաջադիմականները ծափահարում էին նրան։ Գ. Բուղդանեան խօսեց Գերմանիայի բռնած դիրքի վրա, յիշեց կատարված բանակցութիւններն և պարզեց հայոց նուազագոյն պահանջները։ Սարուխան, առիթ առնելով Կավաքլը Մուստաֆայի դէպքը խօսեց այն մասին, թէ իրերի այժմեան հանգամանքում Թիւրքիայում անհրաժեշտ է ճշդիւ պահպանել ոչ միայն կապիտուլասիօններն, որոնք եւրոպական պետութիւնների հպատակների շահերն են պաշտպանում, այլ և Թիւրքահպատակ քրիստոնեաների պատրիարքարանների առանձնաշնորհումներն, որոնց դէմ ոտնձգումները չեն դադարում, և ապա յիշելով Թիւրքիայի վերանորոգչական զանազան փորձերը անցեալ դարի առաջին կէսից սկսած՝ պարզաբանեց, թէ Թիւրքիայի մեծ պակասութիւնը կայանում է ոչ թէ նրանում, որ այնտեղ լաւ օրէնքներ չը կան, այլ որ այդ օրէնքները կամ թղթի վրա են մնում և կամ չեն գործադրվում արդարութեամբ և ինչպէս հարկն է, ուստի որպէսզի գէթ հայկական կրճատված ծրագիրն իրականանայ կեանքի մէջ, անհրաժեշտ է կամ եւրոպական ընդհանուր և կամ Եւրոպայի յանձնարարութեամբ մասնաւոր ռուսական հսկողութիւնը։ Բոլոր հայ ճառախօսների միահամուռ եզրակացութիւնն այն էր թէ հայերի բուն բաղձանքն իսկապէս արտայայտված էր այն ծրագրում, որ ռուսական դեսպանատունը Կ. Պոլսում կազմել և առաջարկել էր եւրոպական դեսպանախորհրդին։ Բայց քանի որ քաղաքական աննպաստ հանգամանքների շնորհիւ այդ ծրագրի իրականացումը մեծ դժուարութիւններ էր պատահել, միւս կողմից Թիւրքիայի հայաբնակ նահանգները կարօտ էին անմիջական բարենորոգումների, ուստի անհրաժեշտ էր որ գոնէ ռուս-գերմանական կրճատված ծրագիրն անյապաղ գործադրվի եւրոպական անվրէպ հսկողութեան տակ, թեթևացնելու համար տեղական հայ ժողովրդի այժմեան ծայրայեղ թշուառութիւնն և իրաւազուրկ վիճակի դառնութիւնները... Ժողովի վերջում Ալէքսանդր Ասրիբէգեանը յանուն հայ հասարակութեան խորին շնորհակալութիւն յայտնեց ռուս առաջադիմականներին յանձին Բրեանչանինովի, այն ջերմ և հոգատար վերաբերմունքի համար, որ նրանք ցոյց են տալիս հայկական հարցի աջող լուծման նկատմամբ։

Հայերի ճառերը լսելուց յետոյ՝ նախագահ պրոֆ. Զուբինսկի ամփոփ կերպով պարզեց նրանց իմաստն, և ապա Բրեանչանինով կարդաց այն եզրակացութիւնն, որ խորհրդակցութիւնը պիտի կայացնէր Կավաքլը Մուստաֆայի դէպքի առիթով և հայկական հարցի ի նպաստ։ Այս եզրակացութիւնը նախագահի և մի քանի այլ ռուսների կողմից մտցված թեթև բարեփոխումներով ընդունվեց ժողովականների կողմից, որոնք ծափահարեցին յարգելի տանտիրոջ նախաձեռնութիւնն այս մասին։ Պէտք է աւելացնեմ, որ եզրակացութիւնը շատ աւելի առաջ է գնում, քան հայոց յայտնած բաղձանքը, որովհետև ռուս առաջադիմականները գտնում են, թէ միմիայն իսկական տեղական ինքնավարութիւնը կարող է բարելաւել Թիւրքահայոց իրաւազուրկ դրութիւնը և թէ դրա համար ռուս կառավարութիւնը պէտք է զօրեղ կերպով միջամտէ հաշւի չառնելով նոյնիսկ Գերմանիայի ընդդիմադրութիւնը։ Եզրակացութիւնն, այսօր հրատարակված է ամբողջապէս տեղական թերթերում, որի մի օրինակը ներփակում եմ «Մշակի» մէջ հրատարակվելու համար։ Ս.

Ց. Գ.—Որոշ նկատումներով անյարմար էր գտնվել, որ Մ. Պապաջանեան մասնակից լինի յիշեալ ժողովին։ Այս առիթով պէտք է ասեմ, որ Պապաջանեան ջերմ և եռանդուն կերպով գործում է նոյնպէս այս հարցում, պահպանելով սակայն իր պաշտօնական դիրքն իբրև բուն հայ ժողովրդի միակ ներկայացուցիչը Պետական Դումայում։ Նոյն

ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Հասարակական պրոգրէսիստ գործիչների մի խումբ, որոնց մէջ կային և Պետական Խորհրդի ու Դումայի անդամներ, յայտնի պրոֆէսօրներ և հասարակական գործիչներ, նոյեմբերի 26-ին Պետերբուրգում կայացած մի ժողովում, Ա. Ն. Բրեանչանինովի բնակարանում, նախագահութեամբ պրոֆ. Շուբինսկիի, գտաւ որ իր յանդգնութեամբ անհաւանական և միջազգային իրաւունքի տարրական հիմունքը խախտող ոճրագործութիւնը, կատարված Թիւրքաց իշխանութիւնների ձեռքով Մուստաֆայի դէմ, ստորացնում է Ռուսաստանի՝ իբրև մեծ պետութեան արժանապատուութիւնը, և չը նայելով դրան, սակայն նա առաջ չը բերեց արժանաւոր և ամուր բողոք։ Անհրաժեշտ է անմիջապէս և ուլտիմատումի ձևով պահանջել և նշանակել տալ դատաստան մարդասպանների վրա ու օրինակելի կերպով պատժել յանցաւորներին։

Ապա ժողովը գտաւ, որ հայկական հարցի լուծումը Թիւրքիայում հայկական վեց վիլայէթներին իրական ինքնավարութիւն տալու ուղղութեամբ՝ կազմում է ռուսական մերձ-արևելեան իրական քաղաքականութեան նպատակը։ Ներկայումս քննվող ծրագիրը բացարձակապէս չէ համապատասխանում բուն էութեան հայ ժողովրդի պահանջներին և կարող է զրօյի հաւասարեցվել թիւրքական պրակտիկայի շնորհիւ։ Իսկ այդ հարցի առիթով ռուս-թիւրքական բանակցութիւնների մէջ գերմանական համաձայնութեան տարր մտցնելը, իբրև վճռող փակտօրի որևէ ռէֆօրմների իրագործման համար, հանդիսանում է ամենավտանգաւոր սխալ ռուսական դիպլոմատիայի կողմից թէ այն պատճառով, որ դա քանդում է երեքպետեան համաձայնութեան գործողութեան միութիւնը, և թէ այն պատճառով, որ նա ստորացնում է բալկանեան պատերազմի մէջ ռուսական դիպլոմատիայի ունեցած վարմունքի շնորհիւ Ռուսաստանի առանց այն էլ Մերձաւոր Արևելքում ստորացած հմայքը, որի աններքելի ապացոյցն է հանդիսանում ռուսական դրօշակի հովանաւորութեան ներքոյ գտնվող Մուստաֆայի սպանութեան միջնադէպը։ Ռուսական դիպլոմատիան պարտաւոր է յիշել, որ Ռուսաստանը իր նպատակներն ունի Մերձաւոր Արևելքում, այնքան անկախ Եւրոպայի և մասնաւորապէս Գերմանիայի համաձայնութիւնից, ինչպէս ունի և ինքն Գերմանիան, որը, սակայն, ամենևին հաշւի չառնելով Ռուսաստանը, աջողութեամբ առաջ է տանում իր նպատակները Բոսֆորում (Բաղդադի երկաթուղին, գէնէրալ Սանդէրսի նշանակումը) հայկական հարցի մէջ այնպէս, ինչպէս և Մուստաֆայի միջադէպի հարցի լիկվիդացիայի մէջ։ Ռուսաստանը պէտք է խօսէ Թիւրքիայի հետ՝ իբրև Բեռլինից անկախ մի մեծ պետութիւն։

(«Бирж. Вѣд.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 դեկտեմբերի

Հռոմ.—Պատգամաւորների պալատ։ Պատասխանելով պատգամաւոր Բարզիլայիին և Բիսսօլատիին, մարկիզ դէ Սան Ջուլիանօ յայտնում է, որ Իտալիան կամենում է Ալբանիայից անկախ ժողովուրդ դարձնել։ Մարկիզը ընդգծում է, որ Գերմանիայի և Աւստրիայի հետ Իտալիայի յարաբերութիւնները սրտագին են, և յայտնում է, որ շուտով այցելելու է կոմս Բերխտօլդին. ապա գտնում է, որ արտասահմանում դէպի Իտալիան տիրող անվստահութիւնը անհիմն է, իսկ Եգէյեան կղզիները գրաւելու խնդրում Իտալիան կանգնած է Լօզանի պայմանագրի հողի վրա։ Իտալիան պնդում է այն սկզբունքի վրա, թէ ոչ մի մեծ պետութիւն չը պէտք է տէրրիտօրիալ արտօնութիւն քաղէ արևելեան ճգնաժամից։

Իտալական քաղաքականութեան նպատակ հանդիսանում է հաւասարակշռութիւն պահպանել Միջերկրական ծովի պետութիւնների միջև։ Անհրաժեշտ է պահել Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը և նրա հզօրութիւնը, որի գոյութեամբ Իտալիան կամենում է մասնակցել ժողովուրդների խաղաղ անտեսական մրցութեան մէջ։

Ընդգծելով որ Ֆրանսիայի հետ յարաբերութիւնները բարեկամական են, մարկիզը յայտնում է, որ դրանք այդպէս էլ մնացին ամբողջ բալկանեան ճգնաժամի ընթացքում։

Սան-Ջուլիանօ կանգ չէ առնում Ռուսաստանի հետ եղած յարաբերութիւնների վրա, մատնանշելով որ ստատս-սեկրէտար Կօկօվցէվի արած հաղորդագրութիւնները ցոյց են տալիս, թէ որքան քիչ հիմք ունեն Բարզիլայի յայտնած յոռետես հայեացքները։

Հերքելով Բարզիլայի ասածները, թէ Իտալիայի և Անգլիայի միջև յարաբերութիւնները սառել են, Սան-Ջուլիանօ հաւատում է, որ երկու պետութիւնների միջև բարեկամութիւնը հաստատուն կը մնայ։

Շեշտելով Բալկանների և եւրոպական տէրութիւնների միջև գոյութիւն ունեցող լաւ յարաբերութիւնները, Սան-Ջուլիանօ աւարտեց իր ճառը հետևեալ խօսքերով. «Իտալիան կը շարունակէ իր քաղաքականութիւնը, որ ուղղված է պահպանելու իր կենսական շահերը։ Անհրաժեշտ է, որպէսզի ամենքը իմանան և հասկանան, որ Իտալիայի համար անցել են ժխտողականութեան քաղաքականութեան օրերը և երբեք էլ չեն վերադառնայ։ Կատարելով այն խոստումները, որ տուինք Եւրոպային մեր վշտի օրերում, Իտալիան միշտ էլ Եւրոպայում և Միջերկրական ծովում կը լինի կարգ ու կանոնի, հաւասարակշռութեան և խաղաղութեան տարր»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 դեկտեմբերի

Պետերբուրգ.—Եալտա մեկնեց մինիստրների խորհրդի նախագահը։

—

Կ. Պոլիս.—Մեծ վէզիրը տեղեկացրեց երրեակ համաձայնութեան պետութիւնների դեսպաններին այն տեղեկութիւնները, որ պահանջել էին նրանք գերմանական միսիայի վերաբերութեամբ. Վէզիրը մատնանշեց, որ միսիան ունի զուտ զինուորական և դիւանագիտական բնաւորութիւն, չէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՕՍՄՕՊՕԼԻՏԸ*)

(Պատմուածք ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ)

—

Գալով մարդկանց, դեռ երեք ամիս չը կայ, որ Ալթունովը մի ինչ-որ բարոնի մենամարտութեան կանչեց Բաթումում։ «Գարշելին» երկչոտութեամբ մերժեց։

— Ցետոյ դուք ինչ արիք այդ անպիտանին,—հետաքրքրվեց Պոստուխովը, նայելով ընչացքի ծայրերին և սրելով նրանց։

— Այն, ինչ որ դուք կանէիք, եթէ իմ տեղը լինէիք. օրը ցերեկով փողոցում մտրակով ծեծեցի։

— Այդպէս էլ հարկաւոր էր,—տուեց Պոստուխովն իր հեղինակաւոր հաւանութիւնը։

— Թոյլ տուէք հետաքրքրվել, ինչ պատճառով էիք այդ վախկոտին մենամարտութեան կանչել,—հարցրեց Տարաշչենկօն պատառը բերնում։

— Մի դերասանուհու պատճառով։

— Բրավօ՛։ Ձեր կենացը։

— Կապիտան, ես բրավօ չեմ ասի,—ասաց Պոստուխովը, ունքերը կիտելով,—դերասանուհիները չարժեն մեր արեան մի կաթիլին անգամ։ Նրանք չափազանց շատ են սիրում նուշիկներ և կոնֆետներ։

— Բայց ես ուրիշ բաների համար էլ եմ ուզեցել մենամարտել,—շարունակեց Ալթունովը ոգևորված,—օրինակ, երկու տարի առաջ կամեցայ պապիցս ժառանգած ատրճանակի գնդակը խրել մէկի կուրծքը։

— Ինչու։

— Անպատուը յանդգնել էր իմ մօտ ճապօնացիների քաջութիւնը փառաբանել և մեր սպաներին ծաղրել։

— Ռէխը պիտի ջարդէիք,—մռնչաց Պոստուխովը, մի ուժգին շարժումն անելով։

— Կամաց, պօրուչիկ, մի՛ տաքանար զուր տեղը,—ասաց Տարաշչենկօն, որի ձեռից ընկաւ գինու բաժակը։

— Եւ ջարդեցի։ Ուրիշ կերպ չէր կարող վարվել։ Ինչ ուզում են, թող ասեն, բայց երբ դիպչում են իմ հայրենասիրական զգացմանը, խելքս կորցնում եմ։ Դուք չը գիտէք, ես ինչե՛ր եմ կրել ռուս-ճապօնական պատերազմի ժամանակ։

Օ՜, քանի քանիսի հետ է վիճել ու կռւել, քանի-քանի անգամ է մենութեան մէջ մատները կատաղութիւնից կծոտել։ Ցուսիմայի և Մուկդէնի պարտութիւնները մի-մի անբուժելի վէրք են բաց արել նրա հայրենասէր սրտի վրա։ Եւ նա չի հանգստանայ՝ մինչև որ հայրենիքի պատերազմական վարկը չը վերականգնվի, մինչև որ մի սոսկալի վրէժ չառնվի այդ ողորմելի մակակներից, այդ ճիպռոտ կապիկներից։

— Այդ մասին չը խօսենք,—խստութեամբ ընդհատեց Պոստուխովը, կուրծքը դուրս ցցելով և նայելով իր հրացանին։

— Չը խօսենք, որպէսզի գործենք,—համաձայնվեց Ալթունովը։

Շուտով գինու շիշերը մէկը միւսի ետեւից դատարկվեցին և լուսամտով դուրս թռան։

Խօսակցութեան նիւթը փոխվեց։ Ալթունովը պատերազմից անցաւ դէպի խաղաղ կեանքը Ռուսիայի։ Պարզվեց, որ նա հետևում է քաղաքականութեանը մայրաքաղաքի լրագիրներով։ Նա պարսաւեց յեղափոխականներին, թերահաւատութեամբ վերաբերվեց Պետական Դումային, յարձակվեց ուսանողութեան վրա, որ ուսում առնելու փոխարէն պօլիտիկայով է զբաղված, ապտակեց ըմբոստ պրոֆէսօրներին։ Ցետոյ սկսեց հայհոյել նախ հրէաներին, ապա լեհացիներին, այնուհետև ֆինլանդացիներին։

Եւ յանկարծ գոչեց.

— Պարոններ, թոյլ տուէք ձեզ հետ «բրուդերշաֆթ» խմել։

— Պատրաստ եմ,—գոչեց Տարաշչենկօն։

— Կարելի է,—սառն պատասխանեց Պոստուխովը։

Այս երջանիկ բարեկամական համբոյրը դրոշմվեց ճիշդ այն վայրկեանին, երբ գնացքը կանգ առաւ սոսկալի դղրդիւնով։ Վագոնների ընդհարումից համբուրվողներն ուժգին դիպան իրար, ապա բաժանվեցին, մէկ էլ դիպան, նորից բաժանվեցին և ընկան՝ Ալթունովը մի, Պոստուխովը միւս նստարանի վրա։

Տարաշչենկօն ծիծաղից թուլացաւ։ Ձեռները դնելով կլորիկ փորի՝ վրա, նա շնչասպառ կրկնեց մի քանի անգամ։

— Ահ, մեռայ, ահ մեռայ, Տէր Աստուած։

Պոստուխովը մի քանի վայրկեան ապշած նայեց դիմացինի կրծքին, ապա յանկարծ կատաղեց և մի քանի շատ կտրուկ յիշոցներ ուղարկեց մեքենավարի հասցէին։

— Ինձ թւում է, պարոն պօրուչիկ, որ այդ լաւ նշան էր,—ասաց Ալթունովը, թաշկինակով սրբելով ձիւնի պէս սպիտակ կուրծքը շապկի։—Ասել է՝ մենք կը բաժանվենք և դարձեալ կը հանդիպենք իրար։ Այսպէս թէ այնպէս, թոյլ տուէք, պարոններ, յայտնել ձեզ իմ անկեղծ գոհունակութիւնը ձեզ հետ ծանօթանալուս համար։ Չը գայիք դուք, ով գիտէ ձեր տեղերը պիտի բռնէին ինչ-որ հոտած հայեր կամ կեղտոտ թուրքեր, որոնց, ի միջի այլոց ասած, ես չեմ սիրում։ Ի՞նչպէս, դուք պատրաստվում էք գնալու։

— Այո, արդէն հասել ենք մեր կայարանը,—ասաց Տարաշչենկօն, հրացանը վերցնելով։

— Գնաք բարև։ Խնդրեմ վատ յիշատակ չը տանէք իմ մասին։

— Օ՜, ոչ, ընդհակառակը, շատ շնորհակալ ենք։ Բայց մի բան ասեմ, չը նեղանաք. Ուդէլնիյ Վեդօմօստիի կառավարիչը ձեզ խաբել է. գինին հինգ տարվայ չէր։

Սպաները դուրս եկան վագոնից։

Մինչ Ալթունովը զբաղված էր ուտելիքների մնացորդը զամբիւղի մէջ ժողովելով, ես գլուխս դուրս բերեցի լուսամտով, որ կարդամ կայարանի անունը։

Սպաներն անցան լուսամտի տակով, հաղորդելով միմեանց իրանց տպաւորութիւնը Ալթունովի մասին։

— Բարի տղայ է,—լսեցի Տարաշչենկօյի ձայնը։

— Այնու ամենայնիւ, արմեաշկա է,—ասաց Պոստուխովը, հրացանը դնելով ուսին...

Ես, քնից նոր զարթնած ձևանալով, իջայ ցած։ Ալթունովն երջանիկ տրամադրութեան մէջ էր։ Մէջքի վրա պառկած, ոտները դիմացի պատիկին դրած, ծխում էր ու քթի տակ երգում։ Նրա թուխ դէմքը կարմիր ու կապտել էր, խոշոր աչքերը լցվել էին արիւնով և պարանոցի երակները փքվել։

— Ահ,—գոչեց նա,—դուք զարթնեցիք։ Վերջապէս, ազատվեցի այդ սոխերից։ Կերան, խմեցին, կորան։ Ափսոս որ արթուն չէիք։ Պէտք է տեսնէիք, թէ ինչ կատարվեց այստեղ։ Ես այդ խրտուիլակների գլխին մի երևելի խաղ խաղացի։ Երբեք նրանք չեն մոռանայ։

Եւ նա պատմեց իր խաղը։ Բանից դուրս եկաւ, որ ես, իբրև քնած եմ եղել, որ իմ տեսածներն ու լսածները երազ էին։ Հիւրասիրելով սպաներին, նա «բաւականին թոյն է ածել» ուտելիքների և ըմպելիքների մէջ։ Նա ոչ միայն չէ թագցրել իր ատելութիւնը դէպի զինուորականութիւնը, այլև սաստիկ նախատել է նրանց, որ այդքան օրինաւոր պաշտօնների և արհեստների մէջ «արեան դաշտն» են իրանց համար ասպարէզ ընտրել։ Նա պարսաւել է Ռուսիայի արտաքին ու ներքին քաղաքականութիւնները, այժմեան ռէժիմի, հալածանքները։ Նա պաշտպանել է ժողովրդի իրաւունքները, Պետական Դումայի անկախութիւնը, մամուլի կատարեալ ազատութիւնը և այլն և այլն, հազար ու մի այսպիսի ազատամիտ բաներ։

— Գիտէք,—աւարտեց նա իր խօսքը, ոտքի կանգնելով,—երևակայեցէք, նրանք ոչինչ չը կարողացան ասել։ Նրանք մինչև անգամ համաձայնվեցին ինձ հետ և ցաւ յայտնեցին, որ, լինելով պետական ծառայութեան մէջ, չեն կարող համարձակ խօսել։

Ես, ի հարկէ, չը հերքեցի Ալթունովի ասածներից և ոչ մինը։ Չէ որ ես քնած էի, ոչինչ չէի լսել կամ տեսել։

Ցաշորդ կայարանում մեր կուպէն մտան երկու ինչ-որ Թուրքեր մի-մի դաշոյն մէջքներին կապած։

Մէկը նրանցից երիտասարդ էր լէք-լէք ու սափրած երեսով։ Հագած էր նա սև աթլասեայ արխալուղ, վրան արխալուղից կարճ պինջակ, ոտներին երկայնավիզ կօշիկներ և գլխին փոքրիկ գդակ Բուխարայի մորթուց կարած։

Միւսը ծեր էր, դէմքը խոշոր կնճիռներով ծածկված, թէև ընչացքը խնամքով ներկած էր և ծայրերը սրած։ Նա հագած էր երկար չուխա լայն փէշերով, վրան չուխայից կարճ մոխրագոյն վերարկու պղնձեայ ոսկեփայլ կոճակներով։

Ես նորից բարձրացայ իմ տեղը, որպէս զի չը խանգարեմ նորեկներին միմեանց մօտ տեղաւորվելու վարի նստարանի վրա։

Ալթունովը կարողացաւ յարմար բոպէ որսալ ականջիս շշնջալու.

— Ահա մի զոյգ ևս ցանկալի հիւրեր՝ ինչ ասել կուզէ։ Չէ, ես էլ պիտի պառկեմ քնելու, եթէ միայն կարելի է քնել դրանց հոտում։

Ներս մտաւ կօնդուկտօրը կուպէի մոմը վառելու։

— Ինչու այդպէս ուշ,—նկատեց նրան Ալթունովը, թէև ուշ չէր,—կարծեմ, կարող էք ձեր պարտականութիւնը կատարել ժամանակին։

Կօնդուկտօրը, որ կանգնած էր նստարանի վրա, վառած լուցկին ձեռին, նայեց վերևից ցած մի տեսակ արհամարհանքով և ասաց.

— Ես չը գիտէի, որ դուք այստեղ էք։

Նրա ծաղրական տոնն Ալթունովի ինքնասիրութիւնը վիրաւորեց։

Ձեռները դնելով վարտիքի գրպանները և գլուխը հպարտ բարձրացնելով, գոչեց։

— Կօնդուկտօր, մարդկանց ճանաչեցէք և համապատասխան տոնով խօսեցէք նրանց հետ։

— Ճանաչում եմ,—պատասխանեց կօնդուկտօրը, առանց երեսն Ալթունովին դարձնելու,—առաջին անգամ չեմ տեսնում ձեզ զբաղվելու ոչ մայրաքաղաքի հանգըստութեան, ոչ էլ Դարդանելը ամրացնելու խնդիրներով, ունենալու է սահմանափակ պարտականութիւններ, ենթարկվելով զինուորական մինիստրին։ Գեներալ Լիմոնը հրաւիրված է իբրև զինուորական միսսիայի պետ, իբրև զինուորական խորհրդի անդամ, դպրոցների տեսուչ և իբրև առաջին զօրաբանակի հրամանատար։

---

*) Տես «Մշակ» № 270.

—

Վիեննա.— Աւստրիական պատգամաւորութիւն։ Շարունակելով բացատրութիւն տալ բալկանեան ճգնաժամի առիթով, Բէրխտօլդ մատնանշում է երևնտալի տեղեկագրի վրա, որ դէմ էր Սանջակի գրաւմանը զինուորական, քաղաքական և ֆինանսական տեսակէտներից։ Պարզելով այն հիմունքները, որոնք դրդեցին Ալբանիան անկախ դարձնել, մինիստրը յոյս ունի, որ Ալբանիան կը դառնայ միապետութեանը օգտակար տնտեսական փակտօր։ Մինիստրը հերքում է կլօֆաչի այն յայտարարութիւնը, թէ երկրորդ պատերազմը Բօլգարիան սկսեց, վըստահ՝ Աւստրօ-Ունգարիայի աջակցութեանը։ Աւստրիայի ցանկութիւնն է վերջ դնել Սերբիայի հետ մասնակի տարաձայնութիւններին։

Ծովային բիւջէն ընդունվեց։ Նաւատորմի գլխաւոր պետ ծովակալ Գաուսը, պատասխանելով սօցիալիստ-հռետորին, ասաց, որ ռուս-եապօնական պատերազմը փայլուն կերպով ճշդեց ծովի վրա գերիշխելու անհրաժեշտութեան դօկտրինան։ Ֆրանսիան ներկայումս բոլոր երկիրներից առաջ է անցել ծովային սպառազինումների գործում։

—

Պարիզ. — Մինիստրների խորհրդի նիստում Կայօն ստորագրութեան համար ներկայացրեց երկու հրավարտակ՝ պատգամաւորների պալատից փոխառութեան և ժառանգական տուրքի օրինագծերը յետ վերցնելու մասին։ Կայօն լիակատար ֆինանսական ծրագիր կարող է ներկայացնել միմիայն պետական ինքնապաշտպանութեան համար որոշված բոլոր արտակարգ գումարների քանակը պարզելուց յետոյ։ Մինիստրների խորհուրդը լիազօրեց ֆինանսների մինիստրին օրինագիծ ներկայացնել պալատին ժամանակաւոր բիւջէի մասին, որ ընդգրկելու է եկող տարվայ յունվար և փետրվար ամիսները։

Բէրտի հարցին՝ կառավարութիւնը պատասխանեց, որ Ֆրանսիան ևս միանում է Անգլիայի առաջարկութեանը այն մասին, որպէսզի միասին քննվեն ալբանական և Եգէյեան կղզիների հարցերը։ Բերլինի ֆրանսիական դեսպանին իրազեկ է արված այդ մասին յայտնելու գերմանական կառավարութեանը։

Սենատը 201 ձայնով ընդդէմ 50-ի ընդունեց մինիստրական դեկլարացիան և Դումէրգի լրացուցիչ բացատրութիւնները։

—

Սօֆիա.—Բօլգարական գործակալութիւնը հաղորդում է. «Վերջերս զանազան միջնորդներ առաջարկում են բօլգար կառավարութեանը իրանց ծառայութիւնները և առանց Բօլգարիայի լիազօրութիւնների գործ են տեսնում փոխառութիւն կնքելու Բօլգարիայի համար։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ բօլգարական պետական գանձարանը յիրաւի զգում է փոխառութեան կարիք, սակայն կարող է եօլա գնալ առ այժմ առանց նրան, սպասելով մինչև եւրօպական ֆինանսական շուկայի բարելաւումը»։

—

Լօնդօն.—Չերչիլլը ուրբաթ օրը մեկնում է Պարիզ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Թէպէտ մենք յաճախ կրկնում ենք, թէ թատրոնը գեղարուեստի տաճար է, թատրոնը կրթիչ հիմնարկութիւն է և այլն և այլն, սակայն մեր հայկական բեմը աշխատում է աղաւաղել այդ հասկացողութիւնը, մանաւանդ վերջին ներկայացումների անաջող դերաբաժանումներով։

Ապացոյց ձեզ նոյեմբ. 26-ին տրված «Յո՞ երթաս» պիէսի խաղը։ Չը նայած այդ երեկոյ շնորհալի դեր. Վահրամ Փափազեանը անկեղծ, զգաստ, սիրագորով և քաջարի Մարկոս էր, իսկ տ. Ադամեանը անմեղ, համեստ և քնքոյշ Լիգիա, որոնց ներդաշնակութիւնը հրաշալի էր, սակայն աչքի զարնող կերպով նկատելի էր այն հանգամանքը, որ դերերն անաջող կերպով էին բաժանված այդ երեկոյեան ներկայացմանը, որից և, ի հարկէ, տուժեց ներկայացման թողած ամբողջական տպաւորութիւնը։ Ինչո՞ւ չը տալ իւրաքանչիւր դերասանին իր ամպլուայի դերերը, որպէսզի նա կարողանայ այն առաջ տանել ու չը տապալէ ոչ ներկայացումը և ոչ էլ իր բարի անունը։

Բայց այստեղ մի հարց է առաջ գալիս։ Արդեօք Դրամ. Ընկ. վարչութեան իրաւասութեան սահմանի մէջ չէ՞ մտնում հոգալ, որ դերաբաժանումը կատարվի անաչառ և լուրջ կերպով. արդեօք նրա պարտքը չէ՞ հետևել գործին, որպէսզի առաջն առնվի այդօրինակ սխալների։ Մի հարց ևս. ինչու համար է այս տարի հրաւիրված տ. Սիրանոյշը։ Ահա երկու ամիս է, ինչ նա խմբի մէջ է, բայց բեմ է դուրս եկել միայն մի անգամ։

Մեզ թւում է, թէ վարչութեան այս վարմունքը սխալ է և չը մտածված։ Հասարակութիւնը մեծ ցանկութիւն ունի տեսնել տ. Սիրանոյշին պատասխանատու դերերի մէջ, լսել հայկական գեղեցիկ լեզուն, սակայն, ինչպէս լսում ենք, վարչութիւնը դժուարանում է պիէս ընտրել։

Տ. Սիրանոյշը մեր բեմի աստղն է համարվում, ուստի թւում է, թէ պէտք էր աշխատել օգտվել նրա ներկայութիւնից և և չը զրկել մեզ այդ բաւականութիւնից։ Երբ տ. Սիրանոյշը այստեղ չէր, անհամբեր սպասում էինք. իսկ երբ եկել է, չենք օգտվում նրա ներկայութիւնից։

Սթափվենք, պարոններ, պայծառ աչքերով և միակերպ ոգևորութեամբ նայենք շըրջապատող իրականութեանը։ Ոգևորվենք մինչև ունենք, այլ ոչ թէ լանք՝ երբ կորցնում ենք։

Նիկ. Աբրահամեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 3 դեկտ.

Նախագահում է Ռօճեանկօն։

Կարդացվում է սօց.-դեմօկրատների և աշխատաւորականների հերթական հարցապնդումը՝ յանուն ներքին գործերի մինիստրի յուլիսի 28-ին ոստիկանական դեպարտամենտի հրատարակած այն հրահանգի առիթով, որով առաջարկվում է նահանգապետներին միջամտել բանւորական գործադուլներին։

Բուրեանովը պաշտպանում է հերթականութիւնը, մատնանշելով, որ հրահանգը, խախտելով 1905 թ. դեկտ. 2-ի հրամանը, պատուիրագրում է տեղական իշխանութիւններին հետևել գործադուլների ընթացքին, միջամտել տէրերի և բանւորների բանակցութիւններին, նաև գործադուլաւորներին ենթարկել դատական պատասխանատւութեան։

Մարկօվ 2-րդ, խօսելով հերթականութեան դէմ, մատնանշում է, որ գործադուլները վնասից բացի ոչինչ չեն տալիս բանւորներին, իսկ միւս կողմից պատճառ են դառնում ապրուստի ընդհանուր թանգանալուն։ Բանւորների տնտեսական կենցաղը բարելաւելու միակ ելքը—պետական իշխանութեան բարեացակամ քաղաքականութիւնն է։ Հռետորը ընդգծում է, որ բանւորները իրանց խաւերում չեն ուզում գործադուլ անել, այլ նրանց դրդում են դրան սօց.-դեմօկրատների տէրրօրը և սպառնալիքները։

Կերենսկին, պաշտպանելով հերթականութիւնը, գտնում է, որ վերջին տարիների դէպքերից յետոյ, դժուար է խօսել այն մասին, թէ մի գուցէ իշխանութիւնները բարեխնամ վերաբերմունք ցոյց տան դէպի բանւորները։ Ոստիկանական դեպարտամենտի հրահանգը, վերացնելով քաղաքացիների հիմնական իրաւունքները, որոնք ապահովված են մինչև այսօր օրէնքով, հանդիսանում է լաւագոյն ագիտացիօն միջոց, որպէս զի պարզ լինի կառավարութեան վերաբերմունքը դէպի բանւորները, որոնք համարված են օրէնքից դուրս։

Հերթականութիւնը մերժվում է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Նոր-Նախիջևան, 25 նոյեմբերի

Դպրոցական ֆօնդի խնդիրը, ինչպէս ընթերցողը գիտէ լրագիրներից, մեծ համակրութիւն է զարթեցրել քաղաքումս. ամենքն էլ աշխատում են իրանց կարողութեան համեմատ տալ։ Գործի աջողութեանը նպաստեցին յանձնաժողովի անդամները, մանաւանդ Գ. Ջալլուչեանը, որ իրան յատուկ եռանդով մէկին յորդորելով, միւսին նպաստի կարևորութիւնը բացատրելով մի պատկառելի գումար հաւաքեց։ Օգնութեան եկան և հաստատութիւնները՝ տեղիս Բարեգործական Ընկերութիւնը, եկեղեցական հոգաբարձութիւն, վանական կառավարութիւն։ Դպրանոցի ուսուցիչներն էլ իրանց ռոճիկից որոշ տոկոս յատկացրին այդ նպատակին։ Իսկապէս մի սուրբ գործ, որին ամենքն էլ մաքուր սիրով, առանց տրտունջի են մօտենում. միայն Կովկասում, մանաւանդ Թիֆլիսում, մեր այսպէս կոչված մտաւորական վայրում, չը գիտենք ինչու այդքան սառն են վերաբերւում։

Սառն, անտարբեր են և մեր գիւղական, բանւորական, աշխատաւոր դասը, ինչպէս սառն են դրանցից հազարաւոր վերստեր հեռու, բայց դրանց անունից ճառող մեծախօս բարոյախօսները։ Երանի՜ թէ վերջիններս այդքան խօսելու և գրելու փոխարէն գործնականօրէն չնչին օգուտ ցոյց տային նիւթականի բացակայութեան շնորհիւ անճարացած և գաղթականութեան ցուպը բռնած հայ գիւղացիութեան։

Նախիջևանում երկու ուսուցչուհու յօբելեան կատարեցին, մէկը բոլորովին ընտանեբար, միւսին մի քիչ հրապարակային բնաւորութիւն տուած։ Գօգօյեան օրիորդաց դպրոցի (այժմ գիմնազիօն) ուսուցիչները մի խնջոյքով յարգեցին դպրոցի տեսչուհի օր. Մ. Ալեանակի 25-ամեայ ծառայութիւնը, իսկ Հախումեան դպրոցի ուսուցչական խումբը իրանց ընկերակցի՝ օր. Կարա-Մուրզայի 30-ամեայ ուսուցչական գործունէութիւնը. երկուսն էլ արժանի յարգանքի և գովասանքի։

Թեմական դպրոցում կան ուսուցիչներ, օրինակ՝ Շահազիզ, Զամինեան, Բայբուրդ և այլք, որոնք նոյն հիմնարկութեան մէջ ծառայում են 20—25—30 տարիներ, բայց ամենքն էլ հրաժարվում են, երբ յօբելեան տօնելու խնդիր են յարուցանում նրանց ընկերակիցները։ Նրանք մխիթարվում են, անշուշտ, երբ տեսնում են քաղաքում դեր խաղացող, վարչական գործերի գլուխ անցած դպրոցաւարտ աշակերտներ՝ հիւանդանոցի աւագ բժիշկ, քաղաքային անասնաբոյժ, ատամնաբոյժ, քաղաքային բժիշկ, իրաւաբան, աչքի ընկնող քահանայ, փաստաբաններ, դրամանոցի կառավարիչ, երաժիշտ, երկրաչափ և այլն, ամենքն էլ մայրենի լեզուով կրթված, ամենքն էլ հոգով հայ կեանքին մօտիկ, սրտացաւ և հայ ընտանիքի հայր... Իրաւ որ մեծ մխիթարութիւն է։ Երանի թէ այսպիսի համեստութեան նշոյլներ ունենային և մեր կովկասահայ գործիչներից ոմանք, որոնք ամեն կերպ աշխատում են յօբելեանով պսակվել, առանց հասկանալու որ փշեայ պսակն է մարդ անհատի զարդարանքը կազմում։

Տեղիս նորընտիր յաջորդ Գէորգ վ. Չէօրեքչեանը, արժանավայել ընդունելութեան հանդիպեց։

Պէտք է խոստովանել, որ հ. Գէորգ վարդապետը քաղաքումս լաւ յարգ ունի և ճանաչվում է իբրև մի ինտելիգենտ, ձեռնհաս հոգևորական, հասարակական կեանքով հետաքրքրվող մի անձն։ Տեղացի լինելով հանդերձ՝ 20 տարի ևս ուսուցչութիւն է արել Թեմական դպրոցում, պատասխանատու առարկաներ աւանդելով, և այդքան ժամանակվայ ընթացքում ապրել է նաև հասարակական կեանքով՝ կենդանի մասնակցութիւն ցոյց տալով ամեն մի ձեռնարկութեան մէջ. հետևապէս նրան ծանօթ է մըթնոլորտը, ծանօթ են տեղիս հայ հասարակութեան կարիքները, որ յաճախ մատնացոյց էր անում։ Յուսով ենք, որ այդ կարիքներին բաւարարութիւն կը տայ նա, մանաւանդ որ այդ ծանօթութեան հետ ունի և՛ եռանդ, և՛ կարողութիւն։

Ռօստովի քաղաքապետը, ինչպէս լսում ենք, սիրով ընդունել է հ. յաջորդին, ինչպէս և սիրով փոխ-այցելութեան է եկել։

Ս.ւ.

—

ՄԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Հին-Նախիջևան, 26 նոյեմբ.

Այս տարվայ ընթացքում ահա երկրորդ թէ երրորդ դէպքն է անձնասպանութեան՝ որ տեղի ունեցաւ քաղաքումս ամսիս 25-ին։

Պետական բանկի տեղիս ճիւղի հաշուապահի օգնական Վ. Մ. Չերնեվսկին, մինչև այժմ չը պարզված պատճառով, առ. մօտաւորապէս ժ. 8-ին, անձնասպան եղաւ ատրճանակից արձակած գնդակով՝ աջ քունքին։

Մարաղեցի

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

VI

Գաւառումս ուսումնական տարին և ուսումը սկսված է իր ժամանակին և մինչև իսկ անցեալ տարիներից աւելի շուտ։ Այդ՝ մի ուրախալի երևոյթ է, որ վերջապէս մեր գիւղական հոգաբարձութիւնը համոզվեց, թէ որքան շահաւէտ է ուսումը շուտ սկսելը և վաղօրօք ուսուցիչ հրաւիրելը։ Մի երկու դպրոցներ բացառութիւն են կազմում և կարծէք թէ չեն էլ նախանձում միւս գիւղերի դպրոցների կանօնաւորմանը. այդ էլ պէտք է վերագրել իրանց գիւղական թայֆաների անվերջ կռիւներին և որոգայթներին, որ շինականները լարում են իրար դէմ։ Այդ գիւղերն էլ ըմբռնում են իրանց ամօթալի դրութիւնը, զգում են թէ մատաղ սերունդի առաջ կրթութեան խոչընդոտ հանդիսանալը որքան ծանր, որքան յանցաւոր մի բան է ներկայումս, և, թէև ուշ, կամովին յանձն են առնում իրանց մեղքը և կանօնաւոր հիմքերի վրա դնում դպրոցի նիւթականը։ Այդպէս էր Խնձորեսկը, ուր ծխական դպրոցում 190-ի չափ աշակերտները ունէին մէկ ուսուցիչ մինչև հոկտեմբերի վերջը, և հասարակութիւնը բարեհաճեց վերջապէս 1000 րուբլի ծխական տուրք տալ դպրոցին և ուսուցիչներ հրաւիրել։ Նոյն Խնձորեսկ գիւղի պետական տարրական դպրոցում՝ անցեալ ուսումնական տարում 40-ի չափ աշակերտներ նստարաններ չունենալու պատճառով ոտքի վրա կանգնած են պարապել։ Այո, սա կատարեալ խղճուութիւն էր և իմ աչքով տեսնելու դժբաղդութիւն եմ ունեցել։ Ուսուցչին հարցնում եմ պատճառը, նա պատասխանում է, որ գրված է այդ առիթով ուր անկ է։ Եւ 1000 տնից բաղկացած մեծ գիւղի 40-ի չափ երեխաները նստարաններ չեն ունեցել և ով գիտէ գուցէ այժմ էլ չունենան։ Սա մի չը տեսնված խայտառակութիւն է մեր օրերում։

Բռնակօթն է իր փակ դպրոցով, աչք ծակող դրութեամբ կանգնած մեր առաջ։ Եւ միթէ նրանք չեն ըմբռնում իրանց յանցանքի ծանրութիւնը։ Այդպէս վարվելով ձեր պիտի հասնեն. չէ՞ որ մի տարով դպրոցը փակ պահելը՝ 10 տարով յետ է ձգում նրանց՝ առաջադիմութեան ճանապարհից։ Մենք միանգամայն լիայոյս ենք, որ Բռնակօթի ներսում և դրսում գտնվող երիտասարդութիւնը միաբանութեան գալով՝ թայֆայի զոհ դըպրոցի դռները թէև ուշ, այնու ամենայնիւ կը բանայ մանուկների առաջ։

Սաղանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մայրաքաղաքի լրագիրները նմանապէս յայտնում են, որ հօֆմէյստէր Պետէրսօնը դառնալու է Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական։

◆ Թիւրքահայ նկարիչ Ս. Երկայնեան, որ իր գեղարուեստական ուսումը ստացել է Ֆրանսիայում և Ամերիկայում և վերջերս եկել է հաստատվելու Թիֆլիսում, բանալով այստեղ իր ատելիէն, պատրաստել է հանգուցեալ Ալ. Քալանթարի իւղաներկ պատկերը, որ շատ լաւ աջողված է և իբրև նմուշ ցուցադրված է «Մշակի» խմբագրատան մէջ։ Ցանկալի էր խրախուսել հայ գեղարուեստագէտին, որ ցոյց է տալիս տաղանդաւոր ձիրք, պատուիրելով նրան զանազան պատկերներ մեր ազգային և հասարակական գործիչների։ Ցանկացողները կարող են տեսնել Ալ. Քալանթարի պատկերը «Մշակի» խմբագրատանը։

◆ Ֆրանսիական Ասիական Ընկերութեան պաշտօնական օրգան «Journal Asiatique» ամսագրի 1913 թ. սեպտ.-հոկտեմբերի համարում տպված է Ֆրեդերիկ Մակլէրի մի աշխատութիւնը Կենտրօնական Եւրօպայի մի քանի մատենադարանների մէջ գտնվող հայկական ձեռագիրների մասին։

◆ Պօլիտեխնիկումի շուրջ գտնվող քաղաքային հողաբաժինները գնելու պատրաստակամութիւն յայտնողների թիւը հասել է մի քանի հազարի։ Յայտարարութիւններ ստացվում են ամեն օր ահագին քանակութեամբ։ Դիմողները մեծ մասամբ միջին դասակարգի մարդիկ են։

◆ Երէկ կայացաւ պօլիտեխնիկումի հարցով զբաղվող գլխաւոր կօմիտէտից ընտրված ֆինանսական մասնաժողովի նիստը։

◆ Արտասահմանից Թիֆլիսի քաղ. վարչութիւնը բերել է տուել պօլիտեխնիկումների մակարդակներ։

◆ Սառցային գործիչների համագումարը Թիֆլիսում կը բացվի այս դեկտեմբերի 15-ին Ժողովրդական Տանը առ. ժ. 12-ին։ Ներկայացված են մօտ 40 զեկուցագիր։ Համագումարին վերաբերեալ տեղեկութիւններ կարելի է ստանալ ամեն օր ժ. 12—2 Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դիւանի մէջ (Բարիատինսկայա փողոց)։

◆ Բագուի նաւթարդիւնաբերող Իսա-բէկ Հաջինսկին ստացաւ այս օրերս սպառնական նամակ 55,000 րուբլու պահանջով։ Հակառակ դէպքում, դրամ պահանջողները նրան մահ էին սպառնում։ Հաջինսկին յայտնեց ոստիկանութեան։ Նշանակվեցին գաղտնի ոստիկաններ։ Դրամ ստանալու եկած մարդը ձերբակալվեց և վիրաւորվեց երկու գնդակով։

◆ Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում որոշեց Նախալօվկա քաղաքամասը այսուհետև վերակոչել «Զավօկզալիէ»։ Վրացիները խնդրել էին անուանել «Իվէրսկայա»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Դեկտ. 3-ին Մուխրանեան կամուրջի մօտ, հայոց հոգևոր կօնսիստօրիային պատկանող դատարկ տեղում գտնվեց թիֆլիսեցի կանաչեղաճառ Արտէմ Դեմուրեանի (70 տարեկան) դիակը։ Պարզվեց, որ ծերունին գիշերները քնում էր յիշեալ տեղում, ուր և մեռել է։

◆ Դեկտ. 2-ին, ցերեկվայ ժամը $4^1/_2$-ին, Դուշէթի գաւառի Մցխէթի կալուածատէր Ալ. Մրվելօվը յայտնեց ոստիկանութեան, որ նա նոյն օրը, ստանալով Մցխեթում 1500 րուբլի, եկաւ Թիֆլիս և ժամը 2-ին մտաւ պետական բանկը յանձնելու փողերը ըստ պատկանելոյն։ Բանկի վերին յարկում գանձապահը չընդունեց նրանից 300 ր. արծաթէ դրամը, առաջարկելով ներքին յարկում փոխել թղթադրամների։ Մրվելօվը իջաւ բանկի ներքին յարկը, փոխեց արծաթէ դրամները թղթի և դրեց վերջինները կողքի գրպանը։ Բայց երբ բարձրացաւ վերին յարկը, Մրվելօվը տեսաւ, որ ոչ 300 ր., ոչ էլ գրպանում եղող 1200 ր. չը կան։ Անմիջապէս Մրվելօվը յայտնեց այդ մասին բանկում հերթապահութիւն անող թաղային վերահսկիչ Բայլեվիչին և Զիկվիսիձէին։ Վերջիններիս ասելով, Մրվելօվը իրանց յայտնեց փողերի անյայտանալու մասին, երբ արդէն

Նման ճամբորդներ։

— Կօնդուկտօր, քաղաքավարի եղէք։

— Յամենայն դէպս ձեզանից չը պիտի սովորեմ քաղաքավարութիւն։

Ալթունովը բորբոքվեց։

— Լսո՞ւմ էք, լսո՞ւմ էք,—գոչեց նա դառնալով թուրքերին,—ահա այդպէս են այդ անկիրթները, միշտ վիրաւորում են ճամբորդներին։ Ես հէնց առաջիկայ կայարանից կը հեռագրեմ երկաթուղու կառավարչին, որ իմ մտերիմ բարեկամն է և գիտէ ով եմ ես։

— Կարող էք հեռագրել որքան կամենաք,— արտասանեց կօնդուկտօրը, նստարանից իջնելով,—այդ տեսակ սպառնալիքներ ամեն օր լսում ենք։

Եւ, մի հեգնական ժպիտ պարգևելով ուղևորին, դուրս եկաւ կուպէից։

— Վայրենի,—գոչեց Ալթունովը, մի ոտը զարկելով յատակին և բռունցքն օդի մէջ բարձրացնելով։—Սպասիր, բարեկամս, երբ քեզ պաշտօնից կը զրկեն, այն ժամանակ կիմանաս, թէ ով է Արկադիյ Մարկօվիչ Ալթունովը։ Դեռ երէկ ես երկաթուղու կառավարչի հետ «Օրիանտ» հիւրանոցում ճաշելիս խօսում էի այսպիսի անկարգութիւնների մասին։ Հարկաւոր է միայն չը մոռանալ պօեզդի նօմերը և այդ անպիտանի ազգանունը հարցնել մէկից։ Ես իսկոյն հեռագիրը կը կազմեմ։

Եւ, ծոցից դուրս բերելով յուշատետրը, ինչ-որ գրեց այնտեղ, արտասանելով.

— Յանդուգն, լիրբ, անասուն...

Այսպիսով բաւականաչափ զգալ տալով նորեկներին իր ընկերական դիրքի բարձրութիւնը (երկաթուղու կառավարչի հետ մտերիմ բարեկամ լինելը և հէնց երէկ նրա հետ «Օրիանտ» հիւրանոցում ճաշելը), նա պառկեց մէջքի վրա և սկսեց ինչ-որ կըտոր երգել «Լիւքսամբուրգի կոմս» օպերետից։

Երբ բոլորովին հանգստացաւ, դարձեալ գլուխը բարձրացրեց, նստեց և նորեկներին հարցրեց.

— Ո՞րտեղ էք բարեհաճում գնալ։

— Եւլախ,—պատասխանեց երիտասարդ թուրքը։

— Երևի, առևտրական գործերով...

— Մենք առևտրի հետ ոչինչ կապ չունենք,—պատասխանեց երիտասարդը մի տեսակ վիրաւորված եղանակով։

— Հապա՞։

— Մենք կալուածատէրեր ենք։

— Կալուածատէրե՞ր,—գոչեց Ալթունովը, կարծես, ուրախանալով,—ներեցէք, ձեր ազգանո՞ւնը։

— Բէքիխանով Ռահիմ-բէգ։

Եւ որպէսզի իր բէգութիւնը հաստատէ, երիտասարդը մորթեայ գդակը քաշեց աչքերի վրա, բաց անելով ծոծրակը, և վիզը քորեց։

— Կարո՞ղ եմ իմանալ ձեր անունն ու ազգանունը,—դարձաւ Ալթունովը ծերունի թուրքին, որ մինչև այժմ լուռ էր։

— Ալլահեար-բէգ Միւլքադարօվ,—ծերունու փոխարէն պատասխանեց երիտասարդը։

— Երևի, գնում էք ձեր կալուածքները։

— Այո։

Ալթունովը շտապեց ուրախութիւն յայտնել, որ հանդիպեց իր «եղբայրակիցներին», վասնզի ինքն էլ կալուածատէր է։ Միևնոյն ժամանակ, նա դուրս բերեց գրպանից ոսկեայ և ադամանդեայ մենագրերով զարդարած արծաթեայ տուփն և ծխախոտ առաջարկեց իր նոր ծանօթներին։

— Ներեցէք, ձեր կալուածքը ո՞րտեղ է գտնվում,—հետաքրքրվեց երիտասարդ Ռահիմ-բէգ Բէքիխանովը, չը հրաժարվելով ընդունել սիրալիր առաջարկված ծխախոտը։

— Քութայիսի նահանգում։

— Մե՞ծ է,—քորեց նա իր գլուխը։

— Այնքան էլ չէ, ընդամենը 6750 դեսեատին, կէսը վարելահող, կէսը անտառ։ Իսկ ձե՞րը։

— Իմը փոքր է, հազար դեսեատին, իսկ Ալլահեար-բէգ Միւլքադարօվինը մեծ է, շատ մեծ։

— Է՜հ,—հառաչեց Ալթունովը,—մեծ թէ փոքր, ներկայումս կալուածքները օգուտ չեն բերում։ Մանաւանդ Վրաստանում։ Այդ «անհանգիստ» եկվոր գիւղացիները միանգամայն երես են առել, հարկ չեն վճարում։ Աստուած գիտէ, ինչ կը լինէր Ալթունովի դրութիւնը, եթէ նա չունենար մի քանի քաղաքային կալուածքներ։

— Ախ, դուք քաղաքո՞ւմ էլ կալուածքներ ունէք,—հարցրեց Ռահիմ-բէգը։

— Այո, դատարկ բան, երեք տուն, մի քարվանսարա և մի քանի տասնեակ խանութներ։

— Թիֆլիսո՞ւմ։

— Իսկ և իսկ։

— Ո՞ր փողոցում։

— Քուռի ձախ ափերումն է, փողոցների անունները մոռացել եմ։ Ո՞վ է հետաքրքրվում։

— Դուք էլ վերջին անկարգութիւններից վնաս կրե՞լ էք,—հետաքրքրվեց, վերջապէս, Ալլահեար-բէգ Միւլքադարօվը, ուսերը վեր քաշելով որ վերարկուն պահի վրան։

— Ի՞նչպէս չէ, ինչպէս չէ,—գոչեց Ալթունովը,—բոլոր անտառներս այրել են կամ կտրատել, այնպէս որ այժմ ինքս էլ չը գիտեմ՝ կալուածք ունե՞մ թէ ոչ... Իսկ դուք երևի նոյնպէս վնասվել էք,—շտապեց հարցնել նա։

— Տունը քանդվի իմ տունը քանդողների,—հառաչեց Ալլահեար-բէգը։

— Ովքե՞ր են։

— Ձեր հայերը։

— Հայ-թուրքական ընդհարումների ժամանա՞կ։

— Հէնց այդ անիծեալ տարին։ Նրանք սրիկաների և գլուխ կտրողների փոխարէն ինձ պատժեցին։ Այրեցին տներս, գոմերս, ամբարներս, թալանեցին կայքս... 100,000 մանէթի վնաս հասցրին ինձ...

(Կը շարունակվի)

ժամի 3-ն էր, այսինքն այնպիսի ժամանակ, երբ բանկում ոչ ոք չէ լինում կողմնակի մարդկանցից։ Ենթադրվում է, որ գուցէ ճանապարհին Մրվելովի գրպանից հանել են 1500 ռուբլին։

◆ Երկու զինուոր Հաւլաբարի ծայրում, սարի մօտ, գտել են մի անյայտ մարդու դիակ, որ ընկած է եղել բաւական երկար ժամանակ։ Հաւանօրէն անյայտ մարդը մահացել է սարի փլուածքի տակ մնալով։ Անցագիրը կարդալ անկարելի է։ Քսակի մէջ ինչ-որ թղթի վրա գրված է եղել «Գերասիմ Շալամբէրիա»։ Դիակն ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։ Միջոցներ են ձեռք առնված պարզելու նրա ով լինելը։

◆ Դեկտ. 3-ին պաշտօնեայ Գաբրիէլ Տէր-Մինասեանի բնակարանից (Ախալցիխսկի նրբափողոց, № 6) անյայտ մարդիկ, նրա բացակայութեան ժամանակ, գողացել են 521 ռուբլու արծաթէ ու ոսկէ իրեր։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Շամախի, 27 նոյեմբերի

Նոյեմբերի 24-ին, կիրակի, տեղիս հայոց դպրոցի դահլիճում հայ ուսուցիչները սիրողների հետ յօգուտ աղքատ հայ աշակերտութեան խաղացին «Աղջամուղջ» Դարիլովի, «Նաւթի ֆոնտան» և «Դօքտոր Թաթոս»։ Դերակատարները բարեխղճութեամբ սովորել էին դերերը, ոչինչ չէին խնայել ներկայացումը աջող անցնելու։ Դահլիճը կիսով չափ էր միայն լիքը։

Զուտ արդիւնք մնացել է մօտ 40 ռ., որ շատ քիչ է և պատիւ չէ բերում Շամախու հայերին։ **

—

Գանձակ, 26 նոյեմբերի

Ամսիս 24-ին, տեղիս ժողովարանի դահլիճում կայացաւ Տ. Նալբանդեանի կոնցերտը. կոնցերտին մասնակցում էր և երգչուհի Շէնինգ։

Նալբանդեանը Գանձակի հասարակութեանը անծանօթ ոյժ չէր. Նրան ճանաչում էին դեռ այն ժամանակից, երբ նա տակաւին սովորում էր, և բաւականաչափ գնահատել էին։ Այս անգամ կասես հասարակութիւնը ծայրէ ի ծայր հաւաքվել էր նրան համեմատելու անցեալի հետ։ Եւ հասարակութիւնը յուսախաբ չը մնաց։

Նալբանդեանը ունի համեմատաբար ոչ ուժեղ ձայն, բայց կարողանում է տիրապետել թէ իր ձայնին և թէ հասարակութեան զգացմունքներին. զգացմունքի ուժգնութիւնը վերին աստիճանի ուժեղ է Նալբանդեանի մէջ. զգացմունքի առատութիւնը մեղմում, թուլացնում է այն բոլոր պակասները, որոնց տրամադիր կը լինէր որոնել պահանջկոտ հասարակութիւնը։

Նալբանդեանը ըստ մեծի մասին երգում էր Չայկովսկիից։ Հայերէն երգեց միայն երկու կտոր՝ «Այ վարդ» և «Կռունկ»։

Երգչուհի Շէնինգ թոյլ էր համեմատաբար առաջին բաժնում, իսկ ուժեղ՝ երկրորդում։

Ընդհանուր առմամբ համերգը անցաւ շատ աջող, և հասարակութիւնը ցրվեց վերին աստիճանի լաւ տպաւորութեան տակ։

Յովս. Տէր-Վարդանեան

—

Դիլիջան, 1 դեկտ.

Շաբաթ, նոյեմբերի 23-ին տեղիս թատերասիրաց ընկերակցութիւնը հաս. ժող. դահլիճում խաղաց Շիրվանզադէի «Չար ոգի» դրաման. Ներկայացումն անցաւ բաւական սահուն։ Ռուսերէն լեզուով խաղացին «Случайный генералъ».

Վերջը եղան ոտանաւորներ։ Պ. Բօրեանը արտասանեց Պուշկինի «Полтава»-ից մի հատուած (ռուսերէն) և Տէրեանի «Մոռանալ, մոռանալ» ոտանաւորը։

Հասարակութիւն շատ կար։ Բ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 նոյեմբերի

Ի պատասխան Շերէկի նամակի, որ լոյս տեսաւ «Մշակի» № 230-ում, անհրաժեշտ եմ համարում ասել հետևեալը.

1) Հաղբատի ս. Նշանեան դպրոցը տարվայ սկզբին ունեցաւ ոչ թէ 40—45 հոգի, այլ՝ 69, իսկ մայիս ամսին ոչ թէ 25, այլ՝ 39, ինչպէս երևում է պաշտօնական տեղեկագրից (№ 15)։ Ձմեռվայ ամիսներում այդ թիւը 81-ի հասաւ։ Երբ ես դեկտեմբերի վերջերին 1912 թ. ուսումնարանը այցելեցի բոլոր հոգաբարձուների հետ, այն ժամանակ էլ նկատեցի, որ երկու սենեակները համարեա թէ լցված են։ Եւ այդ շատութիւնը առաջացաւ առաւելապէս պարտադիր ուսման պահանջից, որի իրագործումը այստեղ փառաւոր կերպով գլուխ եկաւ։

2) Դպրոցի մուտքն էր ա) գիւղից 252 ռ. 50 կ. և ոչ թէ 260 ռ., բ) Կուլտուրական Միութիւնից 180 ռ. և գ) հաւաքական նուէրներից 58 ռ. և ոչ թէ 55 ռ.։ Ծախքեր ոչ թէ 500, այլ՝ 550 ռ. ըստ հաստատված նախահաշուի։ Տարվայ վերջը մէկ ուսուցչուհու 96 ռ. ռոճիկ պարտքի համար գիւղի հոգաբարձուները պարտամուրհակ տուին նրան։ Եթէ ընդունենք բոլոր ուսուցչուհիների ռոճիկները տրված և անհրաժեշտ ծախքերը հոգացված, դարձեալ բաց կը մնայ 60 ռ. (550—490), որը շատ և շատ դժուարին է մեր գիւղացոց պէս անկարագրելի թշուառներից հաւաքել. բայց իրականութիւնը ցոյց է տալիս, որ մէկ վարժուհուն ուսումնարանը պարտք է մնում 96 ռ., երկրորդ ուսուցչուհուն ես, կարծեմ, մօտ 30 ռ., հետևապէս՝ ուսումնարանի պարտքն է՝ մօտ 126 ռ., որը ցոյց է տալիս, թէ 66 ռ., բացի 60-ից, չէ հաւաքվել գիւղացիներից, որպիսի դրութիւն Շերէկը բարենպաստ հանգամանք է համարում՝ նախորդ տարիների հետ համեմատած, երբ Արամեանից 250 ռ. և մի քանի տասնեակ ռուբլիներ էլ Տիգ. Յովհաննիսեանից էր ստացվում ի հաշիւ դատարանի միջոցով ստացվելիք 4000—5000 ռուբլիների, որոնք պէտք է պահանջվէին իշխ. Զ. Բարաթովից։

3) Ես հասարակութեանն ուղղած իմ հրաժարականիս մէջ (№ 20, յուլիսի 22) երբէք չեմ առաջարկել իմ հողս խլող կ. Երզնկեանին գիւղից դուրս անել, այլ խնդրել եմ՝ համախօսական որոշմամբ գործը խաղաղութեամբ վերջացնել այն պատճառով, որ հասարակութեան մի քանի հեղինակաւոր անձինք հաւանութիւն էին տուել կ. Երզնկեանցին իմ վարած հողիս վրա փեթակներ դնել՝ ժամանակաւորապէս, ասելով թէ ինձ և եղբօրս կը համաձայնեցնեն այդտեղ գիշերով ծածուկ դրած փեթակների թողնելուն՝ մինչև ձմեռնամուտը, այդ պատճառով ես հասարակութեանը դիմեցի։ Այդ գործի առիթով ես հարկադրված եղայ նահանգական դատարանի արդարադատութիւնը խնդրել։ Եթէ կարելի լինի, իմ հրաժարականիս պատճէնը դուրս կը բերեմ։

4) Հոգաբարձութիւնը չէ գրաւել ուսուցչուհու անկողինը. դա մասնաւոր գործ է, որ առևտրական հաշիւներով է շաղախված, որոնք վարժուհու և իրեն խանութպանի միջև են կատարված։ Պէտք է միշտ մասնաւորը զատել ընդհանուրից։

5) Կրական գործի վերաբերմամբ ասել, թէ հոգաբարձուները դժգոհ են, դա սխալ է, որովհետև հոգաբարձութիւնը ինձ շնորհակալութիւն յայտնեց իր առաջին ժողովում։

Գալով նախկին վարժուհի Յովհաննիսեանի բաց նամակին («Մշակ», № 254), այս կասեմ, որ նա քանի որ հոգաբարձուներից ստորագրութիւն է առել, հետևապէս՝ ինձանից ոչ մի պահանջ չէ կարող ունենալ ի մասնաւորի *)։

Գրիգորիս ա.-ք. Երզնկեանց

---

*) Սրանով վերջ ենք դնում այս հարցի շուրջը մղվող բանակռւին «Մշակի» էջերում։ Խմբ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Հաճըն, 27 հոկտ.

Կիլիկիա՝ բաղդատմամբ Հայաստանի՝ աստիճան մը աւելի օտար ազդեցութեանց ենթակայ՝ մոլեռանդ պրօպագանդիստներու կեդրոն եղած է։ Կաթոլիկ և բողոքական քարոզիչներ իրենց կրթական հաստատութիւններով, նպաստներով և առանձնաշնորհեալ դիրքով՝ հայութեան հիմերը խախտած են, օգտուելով եռանդով կառավարութեան հայահալած քաղաքականութենէն։ Սելջուքներու, մեմլուքներու, արաբներու կործանարար տիրապետութեան տակ տուայտող դրախտանման Կիլիկիան Թիւրք կառավարութեան մաս կազմելով անգամ մը ևս և նորագոյն հալածանքներու և բնաջնջման կենթարկուի, մէկ ծայրէն միւսը, Մերսինէն մինչև Սիս և աւելի վեր, Հալէպէն, Դէօրթ-Եօլէն, Մարաշէն մինչև Զէքէ և այլն շրջանները, կը տիրապետէ ահու սարսափ. մէկ կողմէն ներքին կէս անկախ բռնակալներ, միւս կողմէն կառավարական անխիղճ պաշտօնեաները ոչ միայն կը կեղեքեն հայ ժողովուրդը, կառևանգեն գեղեցկուհիները, այլ և սոսկալի կը հալածեն հայ լեզուն, մինչև իսկ կրօնը։ Ասոր բնական հետևութիւնն ըլլալով կամաց կամաց հայութեան եռանդը, ազգասիրական ոգին աստիճանաբար կը նուաղի, կը մոռցուի նախահայրերու յիշատակը, մանաւանդ Ցիսուսեան կրօնաւորներու, ամերիկեան և վերջերս ալ գերմանական միսիոնարներու այլասերման գործունէութեան հետևանքով։

Այսպէս՝ կիլիկեան գլխաւոր կեդրոններու հայութիւնը, չըսելու համար ամբողջութիւնը, թիւրքախօս է, կրօնասիրութիւննին շատ մակերեսային է և գրեթէ մոռցած են ազգային սուրբերը, ընդ որս և ս. Սահակն ու Մեսրոպը։ Թարգմանչաց տօնը սոսկ անուանական է հոս, կրօնաւորաց միայն ծանօթ, մինչ Ուաշինգտընի տարեդարձը աւելի մատնանշելի է, բողոքական և լուսաւորչական տարրին համար հաւասարապէս, առաջնոց իբր առ ի երախտագիտութիւն և վերջնոց առ ի շողոքորթութիւն։

Սահմանադրութենէն ասդին, հայկական նոր կեանք մը հետզհետէ կամաց-կամաց սկսած է վերածնել. ամեն կողմ կրթական գործունէութիւն մը կայ, մանաւանդ Միացեալ և Ազգանուէրի եռանդուն գործունէութեան շնորհիւ։ Լ.—Ժ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Պետական Դուման արձակվելու է դեկտ. 7-ից մինչև յունվարի 16-ը։

◆ Լուրերի համաձայն, փախած Իլիօդորը ներկայումս գտնվում է Պետերբուրգում։

◆ Յայտնի «Ջիօկօնդա» պատկերը գողացող Պօրուջիօն Օդեսայի հրէաներից է, երկար ժամանակ ապրել է Իտալիայում և մի քանի տարիներ գտնվել է Պարիզում ռուս գաղթականների շրջանում։

◆ Ռուս նացիօնալիստները որոշեցին պաշտպանել Կօկօվցեվի քաղաքականութիւնը։

◆ Հօկտեմբերեանների մէջ սկսվել է լուրջ պառակտում։ Ամենայն հաւանականութեամբ նրանք բաժանվելու են երկու բանակի։

◆ Կօլօգրիվից հեռագրում են, որ մի կատաղած կատու կծեց 17 մարդու, որոնցից երեքն արդէն մեռել են։

◆ Ռուսաստանը Ֆրանսիային առաջարկեց ֆինանսական ճնշում գործ դնել Թիւրքիայի վրա գերմանական միսսիայի հարցի առիթով։

◆ Աւստրիայի պետական պարտքը ներկայումս կազմում է 12½ միլիարդ կրօն։ Միայն տոկոսիքի համար վճարվելու է ամեն տարի կէս միլիարդ կրօն։

◆ Պետերբուրգի քաղաքապետը 200 ռուբլի տուգանքի ենթարկեց Պետական Դումայի անդամներից մէկին մի բանւորի թաղման ժամանակ ոստիկանութեան գործողութիւնների մէջ խառնվելուն համար։

◆ Անգլիայում չափազանց մեծ պատիւներով ընդունեցին ֆրանսիացի գրող Անատօլ Ֆրանսին։ Լոնդօնում մամուլի ներկայացուցիչների խնճոյքին Ա. Ֆրանսը ասաց, որ առանց խաղաղութեան անհնարին են քաղաքակրթութիւնը և ժողովուրդների բարեկեցութիւնը։ Եթէ Ֆրանսիան, Անգլիան և Գերմանիան շարունակեն սպառազինման քաղաքականութիւնը, նրանք կը պատժվեն սնանկութեամբ և յեղափոխութեամբ։

◆ «Русск. Знамя»-ն երկիւղ է կրում, որ պալատական բժիշկ պրօֆ. Պաւլօվը կարող է կաշառվել հրէաներից և մի փորձանք բերել բարձրաստիճան անձերից նրանց, որոնց նա բուժում է...

Դ-ր ՄԷՅԵՐԻ ՋՐԻ ԴԵՂԱՏՈՄՍԸ ԵՐԵՍԻ ԳՈՅՆԻ ՀԱՄԱՐ

Մի տեղեակ կնոջից

Ոչ մի կին իր հասակի մասին չը պիտի հոգս տածէ, քանի նա ջահել տեսք ունի։ Եւ եթէ դուք գիտէք, որ իւրաքանչիւր կին իր երեսի արտաքին գոյնի տակ ունի այլ աւելի թարմ և գեղեցիկ գոյն, այդ դէպքում ոչինչ չէ արգելում կամ խանգարում պահպանել ընդմիշտ արտաքին ջահելութիւնը։ Եթէ երեսի կաշին, հնացած լինելուց կամ այլ պատճառներից, չէ փոխում իր արտաքին կեղևը և բնականօրէն չէ վերանորոգվում այնպէս, ինչպէս այդ կատարվում է ջահել ժամանակ, այդ դէպքում կարելի է օգնութեան հասնել բնութեանը՝ իր գործունէութեան ասպարէզում։

Այդ միջոցը ներկայումս մեծ աջողութեամբ գործադրվում է ժամանակակից կանանց կողմից։ Գործողութիւնը շատ հասարակ է և ոչ մի դէպքում էլ անդուրեկան չէ։ Հարկաւոր է ձեզ միայն վերցնել մի քիչ լաւ և կիսաթունդ Դէրմօզօն՝ Դ-ր Մէյէրի, որպէս զի կարելի լինի ի չիք դարձնել երեսի տգեղ, պէպէններով ծածկված արտաքին շերտը և երևան բերել այդ շերտի տակ թաքնված գեղեցիկ, ճկուն և ջահել կաշին։ Շատ տգեղ կանայք այդ հասարակ միջոցով դարձել են գեղեցիկ և կենսուրախ։

Եթէ Դուք կամենում էք Ձեզ վրա փորձել այդ միջոցը, այդ դէպքում Ձեզ հարկաւոր է միայն գնել դեղատանը Դ-ր Մէյէրի Դէրմօզօնից 30 գրամ և մի քանի գիշեր քսել երեսին որպէս կօլդ-կրեմ։

Նոյնպէս կարելի է վարվել նաև „ճաքճքված, կոշտ և կարմրած ձեռքերի վերաբերեալ։ Եւ որովհետև այդ միջոցը հասարակ է, էժան և աջողութիւն ունի, դրա համար և հասարակութեան լայն շրջաններում ընդունված է որպէս սիրված դեղ։ Կատարեալ աջողութեան հասնելու համար՝ դեղը գործադրելուց առաջ պիտի լուացվել տաք ջրով ու չէզոք սապոնով և լաւ սրբվել։

Տեղեկութիւնների համար կարելի է դիմել՝ С.-Петербургъ, почт. ящ. № 371.

(П. 144541) 1—1

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

3 դեկտեմբերի

ՍՕՖԻԱ։ Գերմանական դեսպան Միքէլը թագաւորին յանձնեց իր հաւատարմագրերը։ Թիւրքաց և ռումինական դեսպանները ևս կը յանձնեն այսօր իրանց հաւատարմաթղթերը։

ՄԷԼԲՈՒՐՆ։ Ամբրիմ կղզու վրա տեղի ունեցան մի շարք հրաբուխներ, որոնցից Մինի սարը փլվեց։ Շատ գիւղեր մնացին լաւայի տակ։ Կղզու բնակիչները փրկութիւն են որոնում նաւակներով ծովի վրա։ Սպիտակամորթներից վնասվողներ չը կան։ Կարծում են, որ մահացել են շատ տեղացիներ։

ԿԻԵՎ։ Տարնօվսկիի այրին 100,000 ռ. նուիրեց երեխաների մահացութեան դէմ կռւող ընկերութեանը։

ԿՐԱԿՕՎ։ Բիօզալինա կայարանի մօտ արագ գնացքը մահացրեց 8 բանւորի, որոնք դիմացի գնացքից դուրս էին թռել այնտեղի բենզինի պայթումից առաջացած հրդեհի պատճառով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութեան տեղեկութիւնների համաձայն, պետութեան 78 նահանգներից և շրջաններից 70-ի մէջ աշնանացանը բաւարարից բարձր է, 5 նահանգում՝ բաւարար է, միայն Կազանի, Պենզայի և Տուլգայի նահանգներում՝ բաւարարին մօտ է։

Սենատոր հօֆմէյստէր Գիրսը ցուցակագրված է արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեաների թւում։

ԿԻԵՎ։ Գօգօլի արձանի կառուցման խնդրով զբաղվող մասնաժողովը ուրուագծեց հանգանակութեան ծրագիրը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չափահասների համար

Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րէցէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսունակ) եւ նրա բժշկութիւնը» րէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Ծիծաղի ակնոց», ծիծաղաշարժ անեկդոտներ, Մօլլայի ընտիր առակների ժողովածու. ակճռի նկարը գրքի երեսին՝ խիստ ծիծաղաշարժ։ Գինը 20 կ.։
4) «Միւնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գիտակների նկարներով։ Գինը 7 կ.։
5) «Րաֆֆիի կենսագրութիւնը», պատկերով գինը 10 կ.։

Այս բոլոր գրքերը միայն պահանջողներին ձրի ուղարկում եմ «[illegible]» ծիծաղաշարժ փոքրիկը։ Գրքերի գինը և ճանապարհածախսի համար 17 կոպ. մարկաներ առաջուց ուղարկել։ Հասցէս՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу.

(հ. կ.) 44. 100—74

„Մշակի" խմբագրատան

վաճառվում են

ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի 40
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի 60
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի 50
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Ալ. Առաքելեանի . . . 50
6) Մազպա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի 40

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օր նակ կը պահանջեն մեզանից փողը կանխ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճա նապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճա րով պահանջողներին կը լինի միմիայն 15%

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(4) 10—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ

1914 Թ.

„ՇԻՐԱԿ"

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

XVI տարի

300 պատկ.—ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ.—300 պատկ.

Պատի օրացոյցի առաջին երեսների վրա տպագր ված են հայ և օտար, հին և նորագոյն հեղինակն և գործիչների պատկերները թւով 300։ Ե՞րբ պ կան և դպրոցական հիմնարկութիւնները ազատ պարապմունքից. առանձին նշանակված են պօս պարապմունքի ժամերը և պօստի բոլորովին փակ օր րը։ Իւրաքանչիւր երեսի վրա տպագրված են աֆօ րիզմներ, ընտիր մտքեր, առածներ, պատմ կան դէպքերի ժամանակագրութիւն, բան սեղծական բառակներ, մեծ մասամբ իր հեղինակների պատկերներով։ Երկրորդ երեսն վրա տպագրված են՝ գիտական նորութիւններ, բն թեան երևոյթների նկարագրութիւններ, հայկակ տոների պատմական բացատրութիւններ, հեթանո կան սովորութիւններ, բժշկական գիտելիքներ, առո ջապահական խորհուրդներ, ազգագրական տեղեկ թիւններ, զուարճալի պատմուածքներ, պատմական ն շանաւոր դէպքեր հայ, ռուս և այլ ազգերի կեանքի վիճակագրական թւեր և տեղեկութիւններ, խորհրդա ծութիւններ և կենսագրութիւններ նշանաւոր անձա բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր, զուարճա անեկդոտներ մեծ մարդկանց կեանքից։ Գիւղատնտես կան նորութիւններ, տնային տնտեսութեան վերաբ րեալ կարևոր խրատներ։ Ժողովրդական երգեր, երգի ծաղրական հատուածներ, ծիծաղաշարժ առակներ, առածներ, և այլն։

Տախտակը պատրաստված է լիտօգրաֆիայում 10 գոյնով. 1) Աւարայրի դիւցազները—Վարդան Մամիկ նեան և Ղևոնդ երէց, 2) Անմահ Խաչատուր Աբովեանի յուշարձանը, ըստ արձանագործ Տէր-Մարուքեանի, որ բացումը տեղի է ունենալու 1914 թ. Երևանում. 3) Մայր Հայաստան. 4) Հայի ակնկալած յոյսը։ Բոլոր պատկե ներն էլ հայ ընտանիքի համար սիրելի ու պաշտելի դէմքեր։

Պատի օրացոյցի թերթերը ամրացրած են, անցեալ տարվայ նման, թիթեղեայ կապով (жесть). Թերթեր ծակոտված են հեշտ պոկելու համար։

◆

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ

(Հարուստ երազահանով)

Ցուցակը պարունակում է Տօմարական գիտելիքներ.—Տեղեկատու.—Պօստ և հեռագիր, խնայո ղական գանձարաններ, բնակարանի հարկ, նոտարների և դատական պրիստաւների վարձատրութեան չափ դրոշմաթղթեր, մուրհակներ, չափ և կշիռ, դրամներ և արժէքաւոր թղթեր, կտակ կազմելու օրէնքներ, կտակի պայմանագրի օրինակներ։ Բանաստեղծական.—Մի զրոյց՝ Լ. Տոլստոյի, Խիղճը՝ ռուսերէնից, Դատ և բախտ Կազիմիր Տէտմայերից, Հոյլի ախտագնացութիւնը՝ Օ. Տէր-Աւագեանի, Սանձահարողը՝ ֆրանսերէնից։ Գիւղա տնտեսական.—Մեղուաբուծական կանոններ, թռչնաբուծութիւն, անասնապահութիւն (անասնաբուժական գիտ լիքներ)։ Կօօպերացիա.—Սպառողական և վարկի կօօպերացիա։ Գիտական.—Փոքրիկ զրոյցներ.—Մ նիական բժշկութիւն, քիմիան և մածողութիւնը, մածողութեան ոյժը, անգիտակցական ոգին (երազների բ ցատրութիւն)։ Առողջապահական.—Անմաքրութեան չարիքները, թոքախտ և ամուսնութիւն, գարեջրի օ տակարութիւնը, երկարակեցութիւն, առողջական, հիւանդապահների տասնաբանեաներ, երկարակեցութեան կանոններ, վաղահաս մահն արգելել, կեանքը երկարելու և կարճելու պատճառները։ Բժշկարան զանազան հ ւանդութիւնների համար։ Աշխարհի քան գաղտնիք.—Միշտ համբերող ու հաստատուն, աշխատանք և խն յողութիւն, հարստութիւնից օգտվելու եղանակը, միլլիօնատէրերի կարծիքը հարստութեան և հարստանալու ջոցների մասին, մարդ միայն փողով չէ երջանիկ։ Մեր կորուստները 1913 թւին.—Բժ. Ալ. Ղազարեան, Բարխուդարեան, Յ. Տէր-Մարկոսեան, Ս. Զաւարեան, Ալ. Քալանթար, Կ. Խատիսեան (կենսագրական ակնարկ իր պատկերներով)։ Յոբելեաններ 1914 թւին.—Լազարեան ճեմարանի 100-ամեակը—Լազարեան տոհմի պա մութիւնը պատկերներով, Էջմիածնի ճեմարանի 40-ամեակը—Գէորգ Դ. կաթողիկոսի գործերը, պատկերներ Ատրպետի գրական գործունէութեան 25-ամեակը։ Հայկական հարցը և Պօղոս Նուպար փաշա, կենսագր կան։ Ընտիր մտքեր եւ աֆօրիզմներ.—Հարուստ երազահան.—Դիւագնութիւն.—Դրից ճանաչել մա դու բնաւորութիւնը. Դիմագուշակ—դէմքից որոշել մարդու բնաւորութիւնը. բախտաւոր օրեր ամուսնութեան լուսնի երաշգոյց։ Հանելուկներ և խնդիրներ, վիճակարան։ Երեսների թիւը—320։

Գները՝ Պատինը—50 կ., Ծոցինը 20 կ.։ Գումարով գնողներին զեղչ։ Վերադիր վճարով պահանջողներ պէտք է ուղարկեն կանխավճար։

Դիմել՝ Александрополь, типографія «ШИРАКЪ» Карапету Апинянъ. Արտասահմանից Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Ցանկացողները օրացոյցների բովանդակութիւնն առանձին տպագրված թերթով կարող են ստանալ 2

(հ.) 1041. 7—4

ՀԱՇՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

առ 1-ն դեկտեմբերի 1913 թւի

	ԱԿՏԻՎ		
1)	Դրամարկղ և ընթացիկ հաշիւներ.	445,253	98
2)	Ձեղչում մուրհակ., առև. պարտաթղթ. և տիրաժի արժեթղթ.	2.448,691	15
3)	Փոխատուութիւններ ի հաշիւ տոկոսաբեր թղթերի. . . .	27,890	»
4)	Ցատուկ ընթացիկ հաշիւներ (on call)	1.098,382	95
5)	Բանկին պատկանող արժէքաւոր թղթեր.	134,201	70
6)	Արտասահմանեան մուրհակներ և դրամներ.	99,169	44
7)	Բանկի թղթակիցներ.		
	ա) Ըստ իրանց հաշւի.	139,349	97
	բ) Ըստ բանկի հաշւի.	782,321	30
8)	Կահ և կարասիք.	1852	29
9)	Վերադարձնելի ծախքեր.	42,926	19
10)	Ընթացիկ ծախքեր.	39,222	22
11)	Փոխանցիկ գումարներ.	6259	52
12)	Մուրհակներ՝ յանձնարարված (incasso)	95,191	80
	Գումար	5.360,712	51
	ՊԱՍՍԻՎ		
1)	Հիմնական դրամագլուխ (ստացված 50%)	2.500,000	»
2)	Աւանդներ և ընթացիկ հաշիւներ.	1.835,603	80
3)	Բանկի թղթակիցներ.		
	ա) Ըստ իրանց հաշւի.	66,531	04
	բ) Ըստ բանկի հաշւի.	694,778	23
4)	Տոկոսներ՝ վճարելի ի հաշիւ աւանդների և ընթացիկ հաշիւների.	18,919	37
5)	Ստացված տոկոսներ և կօմմիսիա.	93,515	43
6)	Տոկոսներ՝ ստացված ի հաշիւ 1914 թ.	25,789	81
7)	Վճարելի փոխանակագրեր.	6791	79
8)	Փոխանցիկ գումարներ.	23,591	24
9)	Մուրհակներ՝ յանձնարարված (incasso).	95,191	80
	Գումար	5.360,712	51

1127. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный